№ 19 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 28 ՅՈՒՆՎԱՐԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 28 ՅՈՒՆՎԱՐԻ № 19

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
ՆԵՐԿԱՅ 1915 Թ. ՀԱՄԱՐ
(44-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է՝

12 և 11 ամիսը	10 ամիսը	9 ամիսը	8 ամիսը	7 և 6 ամիսը	5 ամիսը	4 ամիսը	3 ամիսը	2 ամիսը
10 ռուբ.	9 ռուբ.	8 ռուբ.	7 ռուբ.	6 ռուբ.	5 ռուբ.	4 ռուբ.	3 ռուբ.	2 ռուբ.

Յունվարի 1-ից մինչև փետրվարի 1-ը 85 կոպ.

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի, Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պէտիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կոպէկ։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն եւ 40 կոպ. նամակադրոշմ։

Հին բաժանորդներին խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

«Մշակը» ունի սեփական թղթակիցներ արևելեան և կովկասեան ռազմաբեմերի վրա—Վարշավա և մօտակայ շրջաններում, Կարս, Սարիղամիշ, Բայազիդ և այլն։

ՊՐԵՄԻԱՆԵՐ

«Մշակի» ՏԱՐԵԿԱՆ այն բաժանորդները, որոնք 1915 թ. համար (սկսած յունվարի 1-ից 1915 թ.) միանուագ կամ մաս-մաս վճարած կլինեն 10 ռուբլի բաժանորդավճարը, կը ստանան 1915 թ. ընթացքում ՁՐԻԱԲԱՐ հետեւեալ նոր լոյս տեսնելիք գրքերը.

1) „Տանջվածը", մեծ վէպ ՇԱՀՐԻԱՐԻ, հայկական յեղափոխական կեանքից։
2) „Հայկական հարցը", լուսաբանված դոկումէնտներով, մի ստուար հատոր, պատկերներով։

Ծանօթ.—Արտասահմանեան բաժանորդները պրէմիաները ստանալու համար պիտի ուղարկեն ճանապարհածախքը, որի քանակը կը յայտարարվի իր ժամանակին։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊՍՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Յունվարի 28-ին, երեկոյեան ժամը 7-ին, Սիօնի մայր-եկեղեցում վրաց մեծ բանաստեղծ

ԱԿԱԿԻԻ

յիշատակին կը կատարվի հոգեհանգիստ, որի մասին խորին վշտով յայտնում է յատուկ Կոմիտէտը, որ ընտրված է վրաց հասարակական-կուլտուրական բոլոր հիմնարկութիւնների կողմից։

56. 1—1

ՅՕԳՈՒՏ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ամսիս 29-ին
„ՈՂՈՐՄԱԾՈՒԹԵԱՆ եւ ԳԹՈՒԹԵԱՆ ՕՐ"

կազմակերպող մասնաժողովը խնդրում է բոլոր այն անձնաւորութիւններին, որոնք գրվել են մասնակցելու ժողովարարութեանը՝ տուփեր և նշաններ ստանալու համար դիմել այսօր, յունվարի 28-ին, ժամը 3-ից մինչև երեկոյեան 8-ը համապատասխան քաղաքամասերի կարգադրիչներին։ I քաղաքամաս—տ. Վ. Անանեանին (Գրիբոէդ. 15), II ք. տ. Մ. Անանեանին (Զավչավ. 2), III ք.—տ. տ. Կ. Խատիսեանին և Ս. Օգանէզեանին (Սերգ. 12) IV ք.—տ. տ. Հ. Առստամեանին և Մ. Ղարաջեանին (Գրիբոեդ. 10), V ք.—օր. Վ. Քախանակեանին և պ. Ս. Սրովեանին (Գայիանեան դպրոց), VI—VII ք.—տ. Ն. Նունուփարեանին (Միքայէլ. 81), IX ք.—տ. Ե. Եարալեանին (Ելիզաւետ. 50), X ք.—տ. Ե. Ադամեանին (Միքայէլ. 111), XI—XII ք.—տ. Մ. Կոնստանտինովիչին և պ. Ե. Եակուբովիչին (Չէրքէզով. 79)։ Նրանք, որոնք նախօրոք չեն յայտնել, թէ ինչ քաղաքամասում են ցանկանում ժողովարարութիւն անել, պէտք է դիմեն տ. Հ. Առստամեանին (Լերմոն. 4)։

առ. 53. 1—1

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Հինգշաբթի, յունվարի 29-ին,
ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿ. ԽՈՒՄԲԸ
Վերջին ներկայացման համար
ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ
կը ներկայացնէ
ՄԵԾՆ ՎԱՐԴԱՆ
Դրամա, 5 արարուածով, Վ. Տիրացեանի։
Մասնակցում է ամբողջ խումբը։
Սկիզբը երեկոյեան ժամը ճիշդ $7\frac{1}{2}$-ին։
Ռեժիսոր՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ
2—1 (ա. օ.) Վարչութեան հերթապահ անդամներ՝ Ե. Ջմշկեան, Ե. Քոչարեան

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԳԻՒՂԱՏՆՏ. և ՏՆԱՅՆԱԳՈՐԾ. ԸՆԿ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է ի տեղեկութիւն Ընկ. անդամների, որ ուրբաթ, յունվարի 30-ին, երեկոյեան ժամը 7-ին, նշանակված է հերթական ընդհանուր ժողով, որ տեղի կունենայ Ընկ. գրասենեակում, Ներսիսեան դպրոցի հին շինութեան մէջ։

Զբաղմունքի առարկաներն են՝
1) «Հայ գիւղացիութեան տնտեսական վիճակը պատերազմի ժամանակ».—զեկուցում Ա. Սահակեանի։
2) «Եզրակացութիւններ վարչութեան անկետային հարցաթերթերով ստացված պատասխաններից». զեկուցում Ա. Մխիթարեանի։
3) Ընկերութեան կանոնադրութեան մի քանի կէտերի փոփոխման անհրաժեշտութիւնը։
(ա. օ.) առ. 55. 2—1

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Յ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
նախկին օրդինատ. Մոսկվայի համալսարանի և ասսիստենտ Բեռլինի համալսարանի պրոֆ. Պօզների։
Ընդունում է հիւանդներին միզասեռական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւններով, առ. ժ. 10—12, երեկ. ժ. 4—6։ Սօլոլակ՝ Բարիշչեվսկայա փող. սեփ. տուն, № 1, հրդեհաշէջների բնակատեղիի դիմացը, տելեֆոն 10—58.
(չ. ու. կ.) առ. [illegible] 70—53

ԲԺ. Գ. ՄԱՂԱՔԵԱՆ
վերադարձաւ։ Հիւանդների ընդունելութիւնը ժամը 5—7 երեկոյեան։
Բէբուտովսկայա № 38, հեռախօս 3—88.
առ. (ա. օ.) 49. 5—5

ՎԵՐՋ ՏԱՆՔ ԽՆԴՐԻՆ

Մինչ հայ մամուլը և հայ հասարակութիւնը, արտայայտելով իր իղձերը և ցանկութիւնները Թիւրքաց Հայաստանի ապագայ վարչական կազմակերպութեան մասին, լռել է այլ ևս այդ մասին խօսելու, վրաց և ռուսաց մամուլը շարունակում է իր քննադատութեան և դատողութիւնների առարկայ դարձնել հայկական աւտօնոմիայի և Հայաստանի անէքսիայի խնդիրը։

Մոսկվայի «Утро Россіи» թերթի մէջ տպված է մի աննպաստ յօդուած Հայաստանի աւտօնոմիայի հարցի մասին, որի մէջ լրագիրը մեղադրում է հայերին և ոչ-անկեղծութեան ու անտրամաբանութեան մէջ։

Վրաց մամուլի օրգանները, գլխաւորապէս «Ախալի Ազրի» թերթը, ինչպէս տեսանք «Մշակի» երէկվայ համարում, կողմնակից չը յայտարարելով իրան Հայաստանի անէքսիային Ռուսաստանի հետ, միևնոյն ժամանակ կողմնակից չէ և աւտօնոմիային ընդ հովանաւորութեամբ Ռուսաստանի և գտնում է, որ նրանք, ովքեր պահանջում են աւտօնոմիա Ռուսաստանի հովանաւորութեան ներքոյ, կազմում են հայ ժողովրդի բուրժուազական-կղերական դասակարգերը։ Նա՝ թէև ոչ բացայայտ կերպով, բայց բաւական թափանցելի կերպով, գերադաս է համարում Թիւրքիայի վերանորոգութիւնը կամ Թիւրքաց Հայաստանին ռէֆօրմներ տալը։

Վրաց լրագիրը սխալվում է՝ կարծելով որ Թիւրքաց Հայաստանին աւտօնոմիա տալը Ռուսաստանի հովանաւորութեան ներքոյ՝ կազմում է հայ բուրժուազիայի և կղերականների իղձը. ո՛չ. այդ ցանկութեան և իղձի մէջ համամիտ է հայ ժողովրդի ճնշող մեծամասնութիւնը, եթէ չասենք 90 ից մինչև 95%-ը։ Մնացորդ փոքրամասնութիւնն էլ բաժանվում է երկու մասի. մի մասը կողմնակից է անէքսիային և պատճառաբանում է իր իղձը որոշ հիմունքներով (այդ մասի անկեղծութիւնը բնաւ կասկածի տակ չենք առնում), իսկ մի մասը պահանջելով հանդերձ աւտօնոմիա և ռուսական պրոտեկտորատ՝ կամենում է պահպանել Թիւրքիայի վեհապետութիւնը, այսինքն նա քարոզում է, թէ պէտք է տալ Թիւրքաց Հայաստանին աւտօնոմիա, պահպանելով Թիւրքական վեհապետութիւնը (սուվերենիտէտը) և գտնելով ռուսական հովանաւորութեան ներքոյ. Ահա այդպիսի պահանջ կամ ցանկութիւն արտայայտողներն են, որ կազմում են փոքրամասնութիւն, որովհետև այդպիսի պահանջը ոչ միայն անիրագործելի է, այլ և անտրամաբանական։

Անտրամաբանական է այն պատճառով, որ ներկայումս մենք ամենքս պատերազմում ենք Թիւրքիայի դէմ։ Եւ հայերը պատերազմում են ոչ միայն կանոնաւոր զինուորներով, այլ և կամաւորներով, իսկ այդ կռւի, պատերազմի նպատակն է՝ տապալել Թիւրքիան, ջնջել նրան իբրև քաղաքական մարմին։ Եթէ այդպէս է, այլ ևս նրա սուվերենիտէտի մասին խօսք լինել չէ կարող. որպէսզի Թիւրքիան սուվերէն կամ վեհապետ լինի, պէտք է նախ և առաջ, որ նա գոյութիւն ունենայ իբրև անկախ և մեծ պետութիւն, ինչպէս մինչև այժմ է. իսկ այդ անհնարին է, քանի որ այժմ Ռուսաստանը պատերազմ է մղում Թիւրքիայի հետ, մենք հայերս էլ աջակցում ենք նրան, և այդ պատերազմի հետևանքը լինելու է ջնջել Թիւրքիայի գոյութիւնը՝ իբրև անկախ պետութեան։

Ուրեմն պահանջել, որ Թիւրքիան մնայ իբրև սուվերէն, վեհապետ և Հայաստանի աւտօնոմիայի վրա տարածէ իր վեհապետութիւնը, դա անհեթեթ պահանջ է, դա աբսուրդ է։

Ինչ վերաբերում է բացի Ռուսաստանից եւրոպական մեծ պետութիւնների հովանաւորութեան, այդ կէտը մեր կամքից և ցանկութիւնից չէ կախված. Դա իրա Ռուսաստանի գործն է. եթէ նա կամենայ կամ ձգտէ, որ բացի իրանից միւս դաշնակից պետութիւնները էլ՝ Անգլիան և Ֆրանսիան հովանաւոր հանդիսանան, մենք ոչինչ չունենք դէմ։ Մեր պահանջը, իղձը՝ շատ պարզ է. մենք ցանկանում ենք, որ երբ Ռուսաստանը յաղթող հանդիսանայ, Թիւրքաց Հայաստանը ստանայ աւտօնոմիա Ռուսաստանի հովանաւորութեան ներքոյ և Թիւրքաց Հայաստանը ազատվի Թիւրքական որևէ իշխանութիւնից։

Սակայն որովհետև այժմ այս հարցերով զբաղվելը անյարմար է նկատվում, ուստի աւելի լաւ կը լինի թողնել առայժմ այդ խնդիրը մինչև այն օրը, երբ պատերազմը կը վերջանայ յօգուտ Ռուսաստանի և Թիւրքիան ու Գերմանիան կը ջախջախվեն։

Հ. Առաքելեան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

ԱՆԳԼՕ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

26 յունվարի

ԿԱՀԻՐԷ.—Մամուլի բիւրօն յայտնում է, որ Սուէզի ջրանցքում նոր կռիւներ չեղան։ Արաբները և Անատոլիայի զինուորների որոշ թիւ գասալիք և անձնատուր եղան անգլիացիներին։ Նրանք խիստ յուսահատվել են յունվ. 20-ի յարձակման անաջողութեան պատճառով. Նրանցից մի քանիսը պատմում են, որ փորձեցին վերադառնալ իրանց գծերը, բայց տեսան, որ գերմանացի և թիւրք օֆիցերները գնդակահարում են փախածներին, ուստի և աւելի անվտանգ համարեցին անձնատուր լինել։ Թշնամու զինուորներից ոչ մէկը վերջին կռւում չը հասաւ ջրանցքի արևմտեան ափը, բացի գերիներից և չորս զինուորից, որոնց փախուստի մասին արդէն տեղեկացվեց։

Ներկայումս թշնամին ամրակծում է Իսմայիլիա քաղաքի շէնքերը, սակայն ռումբերը մինչև այժմ քաղաք չեն ընկել։

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

26 յունվարի

ՍՊԱՀԱՆ.—Բժիշկ Պուժէնը, որին շահի կառավարութիւնը մերժեց վաւերացնել պաշտօնական գրութիւնները, 10 օր գտնվում էր Սպահանի մօտ։ Յունվարի 24-ին նա եկաւ քաղաք և դիմաւորվեց ժանդարմներից, բայց իշխանութիւնները, ի նկատի ունենալով որ Պուժէնին նշանակելու մասին պաշտօնական տեղեկութիւններ չը կան, մերժեց դիմաւորել։ Պուժէնի տան վրա ծածանվում են գերմանական և թիւրքական դրօշակներ։

ՄԱՍՍՕՎԱ.—Ստեֆանիի գործակալութիւնը յայտնում է. «Անգլիական հիւպատոսը տարվեց Հօդէյդայի իտալական հիւպատոսարան, ուր բարձրացված է իտալական դրօշակ, որին Թիւրքաց իշխանութիւնները պատիւներ տուին։ Անգլիական հիւպատոսը իտալական «Մարկօպօլօ» ռազմանաւի պաշտպանութեամբ նստեց անգլիական «Էմպրէսօֆաղիա» յածանաւը։ Այդպիսով միջադէպը սպառված է։ Այսօր հիւպատոսարանի և Հօդէյդայի իշխանութիւնների միջև հաստատվեցին սրտագին յարաբերութիւններ։

(Լրագիրներից)

◆ Էնվէր-փաշայի կարգադրութեամբ, Թաւրիզից զօրքերի պետ Մուստաֆա-փաշան ետ է կանչվել Թիւրքիա։

◆ Կ. Պոլսում տիրում է լքում. երկիւղ են կրում, որ երկու կողմից զօրք կիջնեն ափ։ Շտապով ամրացնում են գերմանացիների ղեկավարութեամբ Իշխանաց կղզիները, Անատոլիայի ծովափը և Զաթալջան։

◆ Օդեսսա է հասել երկար չարչարանքներից յետոյ Բաղդադի ռուսաց հիւպատոս Չերկասովը և Նէջէֆի փոխ-հիւպատոսը։ Նրանք պատմում են, որ Թիւրքերը Բաղդադի ռուսաց հիւպատոսարանը քարուքանդ են արել։

◆ Թիւրքիայում չափազանց անհանգիստ են Գերմանիայում հացի մենավաճառ մտցնելուց, որովհետև Գերմանիան այլ ևս չէ կարող իր խոստացած հացի պաշարները ուղարկել Թիւրք զօրքերի համար։

◆ Անգլիացիք 150 կիլոմետր հեռու Բաղդադից գրաւել են կարևոր ռազմագիտական կէտեր։ Տեղական ազգաբնակութիւնը ցնծութեամբ է ընդունում անգլիացիներին։

ԱՐՆՋԱԳՈՅՆ ԳԻՐՔ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Պետ. Հեռ. Գործ.)

26 յունվարի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Արտաքին գործերի մինիստրութիւնը հրատարակել է Նարնջագոյն Գիրք հայկական բարենորոգումների մասին (1912 թ. նոյեմբերի 26-ից մինչև 1914 թ. մայիսի 10-ը)։

Գրքում պարունակվող դիւանագիտական գրութիւնը նկարագրում է այն ջանքերը, որ գործադրեց ռուսական դիպլոմատիան վերջին տարիներում՝ Թիւրքիայի դժբաղդ հայերի վիճակը ըստ հնարաւորութեան բարելաւելու նպատակով, ջանքեր, որոնք ամեն քայլում դիմադրութեան էին հանդիպում բարենորոգումների դէմ դաւեր նիւթող գերմանական դիպլոմատիայի կողմից։

1913 թ. յուլիսին Ենիքեօյի մասնաժողովի արձանագրութիւնները, որոնք առաջին անգամ ամբողջովին հրատարակվեցին, առանձնապէս ընդգծում են Գերմանիայի՝ իբրև քիւրդական ջարդարարների պաշտպանի դերը ընդդէմ քիւրդերի զոհ հայերի։ Գերմանիայի դիմադրութիւնը, այնու ամենայնիւ, կարող էր միայն որոշ չափով արգելք լինել բարենորոգումներին։ Ձեռք բերված հետևանքը, այսինքն Հայաստանի վրա արտասահմանեան վերահսկողութիւն սահմանելը՝ ներկայանում է չափազանց խոշոր, և 1914 թ. յունվ. 26-ի ակտը, ստորագրված Ռուսաստանի ներկայացուցչից և մեծ վեզիրից, կարող է նկատվել իբրև հայ ազգի առաջին սահմանադրական գրութիւն (խարտիա) խլված Ռուսաստանի ձեռքով Թիւրքիայից և Գերմանիայից։

ՄԻ ՀԵՂԻՆԱԿԱՒՈՐ ԿԱՐԾԻՔ

Այս օրերս, օգտվելով գործող բանակում պատասխանատու պաշտօն ունեցող հայազգի մի զինուորականի Թիֆլիսում գտնվելու առիթից, մենք տեսակցեցինք նրա հետ։

Յարգելի խօսակիցս, որը բացի իր ունեցած դիրքից՝ հանդիսանում է նաև 1877—1878 թւականների ռուս-թիւրքական պատերազմի հայազգի ամենաանուանի զօրապետներից մէկի շատ մօտ ազգականը, ամենասիրալիր կերպով տուեց մեր բոլոր հարցերին պատասխան և դրանով ապացուցեց, որ նրան ուղղած հարցերս լուրջ կերպով զբաղեցրել են և իրան՝ որպէս զինուորականի, լաւ հայի և շրջանկատ անձի...

Ի նկատի ունենալով որ մեր շօշափած խնդիրները իրանց այժմէութեամբ ներկայացնում են հասարակական խոշոր արժէք, մենք բերում ենք մեր զրոյցը՝ հաւատարիմ մնալով խօսակցիս յայտնած մտքերի բովանդակութեանը կէտ առ կէտ։

— Ներեցէք, եթէ ես ձեր տուած հարցերին չը պատասխանեմ ձեր ուզած յաջորդականութեամբ, այլ անեմ որոշ շեղումներ և կանգ առնեմ մի շարք երևոյթների վրա, որոնք ինձ զբաղեցրել են լրջօրէն։

Այս առաջաբանով սկսեց խօսակիցս, և ապա շարունակեց.

«Այս պատերազմը, իմ կարծիքով, շատ խոշոր արժէք է ներկայացնում հայ ժողովրդի ռեպուտացիայի համար. առաջին անգամն է, երբ հայը հնարաւորութիւն է ունէնում, Ռուսաստանի համար պատմական այսպիսի մի կարեւոր մոմենտում, հրապարակ գալ ցոյց տալու իր քաղաքացիական և մանաւանդ ռազմական ընդունակութիւնները, իր կորովը, իր քաջութիւնը en masse, որովհետև սա առաջին պատերազմն է, որի մէջ, շնորհիւ ընդհանուր զինուորական ծառայութեան, ռուսահայը պատերազմի դաշտ է հանել իր զաւակներից մօտ 80,000 հոգի և դրանց մէջ մօտ 2000 հայ օֆիցերներ՝ սկսած պրապորշչիկից մինչև գեներալներ։

«Դուք, անշուշտ, յիշում էք,—շարունակեց խօսակիցս,—այն սարսափելի կարծիքը, որը, շնորհիւ ռուս մեծ գրող Պուշկինի «Голубъ» պօէմայի յայտնի

Поди ты прочь, ты мнѣ не сынъ!,
Ты не чеченецъ, ты старуха,
Ты трусъ, ты рабъ, ты армянинъ!

տողերի, այնքան տարածված է ռուս հասարակութեան, և գլխաւորապէս ռուս զինուորականների շրջաններում։ Բեհբութեաններ, Արղութինսկիներ, Մադաթով, Լօրիս, Լազարեւ, Տէր-Ղուկասով, Շելկօվնիկով, Ալխազեաններ և այլ հայազգի զօրապետները իրանց արտակարգ քաջութիւններով, դժբաղդաբար, չը կարողացան հայի երեսից սրբել այն մեծ արատը, որը այնպիսի թեթև սրտով դրոշմել էր մի ազգի երեսին հանճարեղ ռուս գրողը։ Դրանց բոլորի՝ ռազմական այդ մեծ հերոսների սխրագործութիւնները ռուս հասարակութեան աչքում մնացին լոկ որպէս էպիզոդներ, իսկ ընդհանուր ֆոնի վրա մնաց և մնում էր նոյն «վախկոտ», «ստրուկ» և «պառաւ» հայը. և ցաւոք սրտի՝ մինչև օրս էլ ռուսական զինուորական շրջաններում այդ յատկութիւնները բնորոշ էին համարում հայի համար։ Սակայն, փառք Աստուծոյ, եկաւ այս պատերազմը, որը, վերջապէս, հնարաւորութիւն է տալիս հային պարզ երեսով ու պատուասիրութեան զգացմունքով կանգնել նոյն այդ ռուս հասարակութեան և զինուորականութեան առջև ասելու նրան՝ «արի և քո սեփական ձեռքերով սրբիր իմ ճակատից այն սարսափելի վերնագիրը, որ դրոշմել էր իր ձեռքով և իր գրչով մեր ճակատին ձեր մեծ բանաստեղծը»։ Եւ ես համոզված եմ, որ այդ ասելու իրաւունքը կունենանք մենք այժմ՝ այս պատերազմից յետոյ։

«Դրան ապացոյց. Ահա ձեզ այն 20—30 հազար հայ զինուորները, որոնք հերոսի նման կռւում են ռուս զինուորների շարքում Վիսլայի, Գումբինէնի, Բզուրայի շրջաններում և ռուս զօրքի հետ միասին, որպէս նրա անբաժան ընկեր՝ զէնքի հաւատարիմ ընկեր իրանց կեանքի գնով են ծախում ամեն մի քայլ, և գերմանական շրապնէլներին ու «չեմօդաններին» պատասխանում են՝ «насъ не напугаешь» արհամարհական ժպիտով։

«Իսկ այստե՞ղ՝ Թիւրքական սահմանագծում. դուք գիտէք, որ այժմ մեր ճակատում թշնամու դէմ մասնակցում են 50,000-ից աւելի հայեր, որոնց կէսից շատ աւելին ռուս զինուորի ու կօզակի հետ միասին, ուս ուսի տուած, ոտքը ոտքին հաւասար, քայլում ու մասնակցում են 7000—10,000 ոտնաչափ բարձրութիւն ունեցող լեռներում, նրա անդունդներում ու ձորերում, ձիւնի ու սառոյցի մէջ, մահ են տալիս ու մահ ընդունում, հաւասարապէս մկրտվելով ռազմի դաշտի զօռ աւազանում։

«Ահա թէ ո՛ւր է գտնվում հայ ժողովրդի պարծանքը՝ այս 70—80 հազար քաջերի մէջ»։

— Ասացէք, խնդրեմ, ի՞նչ կարծիքի էք դուք հայ կամաւորների մասին,—դիմեցի ես խօսակցիս։

«Ամենալաւ. նրանք և՛ քաջ են, և՛ պարտաճանաչ, և՛ դիմացկուն։

«Սարիղամիշի շրջանում եղած կռիւներում մանաւանդ՝ արտայայտվեց դրանց այդ արժանիքները՝ յատկապէս հայկական 3-րդ դրուժինայի, և այդ բանը գտաւ իր գնահատութիւնը հրամանատար գեներալի կողմից, որը պարզապէս ասաց. «Հայ դրուժինաները կռւում էին ոչ պակաս ռուս զինուորներից»։ Բայց միթէ հարցը դրանումն է, միթէ դուք կարծում էք, որ մի բանակում, ուր կան 150—180 հազար զինուորներ ու զինուորականներ, այնտեղ 3—4—5 հազար կամաւորները կարող են առանձին արժէք ունենալ։

«Իսկ մենք, ահա, թողած մի կողմ այդ 150—180 հազարին և դրանց մէջ հէնց մեր 40—50 հազար հայ զինուորներին, մի գլուխ խօսում ու գովում ենք միմիայն կամաւորներին, յօդուածներ ենք գրում, հեռագիրներ տալիս, ովացիաներ սարքում նրանց՝ մոռանալով միւս հերոսներին, այն տասնեակ և հարիւր հազարաւորներին և նրանց հետ մեր հազարաւոր զաւակներին, որոնց անձնուիրութեանը մենք այնքան բանով պարտական ենք...

«Կամաւորների կազմակերպութիւնը. դրա մասին էք հարցնում։ Շատ ուրախ եմ, որ դուք շօշափեցիք այդ հարցը, որովհետև դա ամենից ցաւալի կողմն է գործի։ Ասեմ։ Ես կարծում եմ, որ կամաւորների գործը մեզնում կազմակերպված է շատ վատ, այսինքն այնքան վատ, որից այն կողմը երևակայել անգամ անկարելի է։ Ի՞նչ են նրանք՝ մեր այդ, ճիշդ որ, քաջարի ու անձնուէր կամաւորները։ Հետախուզողնե՞ր. ոչ, քանի որ դրանց հաւատ չեն ընծայում թշնամու երկրում, ճանաչում են նրանց հագուստից, ուսանշաններից։ Կանոնաւոր կռւողնե՞ր. ոչ, որովհետև նրանք զինուորական ծառայութիւն չեն անցած, շատ ու շատ բաներում դեռ խամ են։ Եւ ահա այդ քաջերի մեծագոյն մասը, եթէ չասենք բոլորը, ակամայ զոհ են իրանց վատ կազմակերպութեան. չունեն բժիշկ, հարկաւոր դեղօրայք, վիրակապ. նոյնիսկ ֆէլդշերներ չը կան, չը կան նօսիլկաներ, չեն ունենում կերակուր, սնունդ, հագուստ, մահ են գտնում խեղճերը ճղճղված, երբեմն առանց ոտնամանների և այն էլ ձմերային, լեռնային այս պատերազմում։ Չէ, դա յանցագործութիւն է հէնց այդ ոգևորված տղաների վերաբերմամբ, որոնք, սակայն, ուրիշ պայմաններում կարող էին այժմեան արածներից տասնապատիկը անել։ Իսկ այն սանիտարնե՞րը, մանաւանդ այն ինտելիգենցիա՞ն, որը, չը գիտեմ ինչու, ման է գալիս հայ կամաւորների խումբից. գործին անծանօթ, անհամեստ, շատ անհամեստ, յաւակնոտ և, բառիս բուն մտքով, գործին անպէտք այդ մարդիկ։ Իմ կարծիքով, դրանց պէտք է որ առաջ հեռացնել կամաւորների խմբերից և փոխարինել բառիս բուն մտքով իսկական սանիտարներով, գործ հասկացող, գործ կատարող մարդկանցով և ոչ թէ, ներեցէք ասածներիս, «дамскій кавалеръ»-ներով...»։

— Ի՞նչ էք կարծում, ո՞րպիսի կազմակերպութիւնն է ամենից նպատակայարմարը,—հարցրի ես։

«Այն, ինչ որ ընտրել են հէնց մեր վրացիները, այն է՝ վրացի դրուժինաներ՝ որպէս ռուս կանոնաւոր զօրքի անբաժանելի և օրգանական մաս։ Եթէ այդպէս կազմակերպված լինեն հայ կամաւորների խմբերը, նրանք կարող են ունենալ հայ օֆիցերներ, հայ հրամանատարներ, կը խօսեն հայ լեզուով, կունենան իրանց բոլոր մասերը ճիշդ այնպէս, ինչպէս ռուս զօրքը՝ և՛ հաց, և՛ բժիշկ, և՛ սանիտար և՛ հագուստ, ամեն բան։ Ահա այն միակ կազմակերպութիւնը, որին պէտք է վերածվի, գոնէ այսուհետև, մեր կամաւորները։ Դեռ ևս ուշ չէ և դրան պէտք է ձգտել ամեն կերպ։ Դա է պահանջում և կռւողի շահը և, եթէ կուզէք, հէնց հայերի շահը՝ եթէ նրանք այդ 3—4000 մարդկանցով ցանկանում են, ճիշդ որ, մի աչքի ընկնող դեր կատարել այս պատերազմում՝ մեր զօրքի հետ և նրանից անբաժան»։

— Ի՞նչպէս են վերաբերվում բանակում կամաւորների հետ,—հարցրի ես։

«[illegible] նրանց՝ շատ լաւ. զինուորական բարձր իշխանութիւնը լաւ կարծիք ունի, և այդ բանը, ինչպէս ես արդէն ասացի, նոյն իսկ քանիցս շեշտվել է. բայց վատ է, երբ ամեն ինչ չափազանցվում է, փքեցվում, ուռցվում է, մանաւանդ թերթերում։ Այդպիսի տակտիկան ոչ մի օգուտ չը տալով գործին՝ ընդհակառակը միայն վնասում է... Օֆիցերների և մանաւանդ մեր «բարեկացակամների» մէջ առաջացնում է ժպիտ, ծիծաղ, ծաղր, որ, ի հարկէ, ցանկալի չէ ոչ ոքի համար, մանաւանդ հէնց նոյն կամաւորների, որոնց այս դէպքում կատարած ծառայութիւնները այդ ուռուցման պատճառով ակամայ ստւերում են... Եւ յետոյ մամուլը... Օ՛, ես կարդում եմ մեր կովկասեան մամուլը՝ նրանում լոյս տեսած սեփական հեռագիրներն ու պատերազմի բեմից գրված «թղթակցութիւնները»... Աստուած վկայ, բառիս բուն մտքով դրանք ծիծաղելի են և ապացուցանում են միայն մի բան, որ դրանց գրողները նոյն իսկ հեռաւոր և ամենատարրական գաղափար չունեն պատերազմի, ճակատամարտի, տեղի, դիրքի, զօրամասի մասին. երբ այդ թղթակցութիւնները անցնում են մեր զինուորականների ձեռքը, մենք մտածում ենք. «Տէր Աստուած, ինչպիսի՞ յիմար և սուտ բաներով են կերակրում մեր թերթերը իրանց ազգէտ և միամիտ ընթերցողներին...»։

Դեռ երկար խօսեցինք յարգելի զինուորականի հետ այդ և այլ հարցերի շուրջ, որոնք կապված են պատերազմի հետ և որոնց ապագայում հաւանականօրէն կը մօտենեն իմ «զրոյցների» մէջ։

Ժամը 12-ն էր գիշերվայ, և մենք, շնորհակալութիւն յայտնելով նրան, հեռացանք։

Ա. Երկաթ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
26 յունվարի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Վիսլայի աջ ափում կռիւները Բէպպա շրջանում ընդունեցին աւելի յամառ բնոյթ. տեղի էին ունենում նաև ընդհարումներ առաջապահ զօրախմբերի միջև Խօրժելէ-Միշինեց-Իօհաննէսբուրգ զօրաճակատում։

Վիսլայի ձախ ափում թնդանօթաձգութիւնը շարունակվում է, բայց թշնամին պասիվ է։ Բօրժիմով ու Վօլիա Շիդլովսկայա շրջանում մեր զօրաճակատը ճեղքելու փորձը, որին թշնամին ձեռնարկեց յունվարի 18-ից, կանգ առաւ յունվ. 24-ի մօտ, չը նայած որ գերմանացիք գործի էին հանել մեծաքանակ ոյժեր։ Այս աջողութիւնը մենք ձեռք բերինք շնորհիւ մեր զօրքերի տոկունութեան ու քաջութեան։ Ցիշեալ ռազմավայրում կռւի մէջ գերմանացիք լայն կերպով գործածեցին պայթուցիկ գնդակներ։

Հարաւային Բզուրի կողմում մեր զօրքերը շարունակեցին առաջխաղացումը և յունվարի 25-ին, առ. ժամը 5-ի մօտ, յաղթահարելով թշնամու երեք կարգ խրամները, տիրացան թշնամու մի ուժեղ դիրքի Կամյօնի գիւղի մօտ։ Այդ զօրախմբի մնացորդները, թւով 15 օֆիցեր և 350 զինուոր գերի ընկան մեզ։ Մի ժամ անց գերմանացիների գործած հակայարձակումը վանվեց նրանց համար խոշոր կորուստներով։

Կարպատներում մեր առաջխաղացումը շարունակվում է։ Մեզօյի մօտից մինչև Լիւտովիսկ մենք տիրացանք մի քանի ամուր դիրքերի, գերելով մի օրվայ մէջ մօտ 160 օֆիցեր և աւելի քան 3500 զինուոր ու ձեռք ձգելով 11 գնդացիր։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
26 յունվարի

ՊԱՐԻԶ.—Երէկվայ երեկոյեան պաշտօնական հաղորդագրութիւնը յայտնում է.

«Բելգիայում յունվ. 24-ին հանգիստ անցաւ։ Ջրանցքի և Բէտուն-Լա-Բասսէ ճանապարհի միջև, կէնշից մի կիլօմետր դէպի արևելք այն աղիւսագործարանը, ուր մինչև այժմ գտնվում էր թշնամին, անգլիացիք վերցրին։ Արրասի մօտից մինչև Րէյմս տեղի են ունենում մեզ համար նպաստաւոր թնդանօթային կռիւներ։

ՊԱՐԻԶ.—Երէկ երեկոյեան պաշտօնական հաղորդագրութիւնն ասում է. «Լոյս յունվ. 25-ի գիշերը թշնամին Նիւպօրի շրջանում մի քանի փոքր յարձակումներ գործեց, որոնք բոլորը վանվեցին»։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
26 յունվարի

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ.—Վիէննայից լրագիրներին տեղեկացնում են, որ իշխան Վիդը՝ Ալբանիայի նախկին կառավարիչը՝ գտնվում է Կարպատներում կռւող գերմանական զօրամասերի օֆիցերների մէջ։

ՊԱՐԻԶ.—Եկաւ գեներալ Րիչչիոտի Գարիբալդին իտալական պատգամաւոր Պիօլինի ուղեկցութեամբ։ Կայարանում նրան դիմաւորեցին իր չորս որդիները, Պարիզի բերդապետ գեներալ Գալօյէնը և բազմաթիւ ժողովուրդ, որ բուռն կերպով ողջունում էր նրան։

«Տանի» աշխատակցի հետ խօսելիս, Գարիբալդին ասաց, որ Բիւլովի ջանքերը Իտալիայում լիակատար պարտութիւն կրեցին։ Հասարակական կարծիքը թագաւորութեան մէջ միաբերան կողմնակից է Իտալիայի հանդէս գալուն։

Ցերեկով Գարիբալդին ընդունվեց Միլերանից։

ԼՕՆԴՕՆ. — Եկաւ ռուսաց ֆինանսական մինիստր Բարկը։

ՆԻՇ.—«Պրէսս-Բիւրօն» յայտնում է, որ եթէ աւստրիացիք չը դադարեն «դում-դում» փամփուշտ գործածելուց, սերբերը նոյնպէս ստիպված են լինելու նոյնը անելու։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ. — Վիէննայից հաղորդում են, որ աւստրօ-ունգարական ֆինանսների մինիստր Բիլինսկին հրաժարական տուեց։ Նրա տեղ նշանակված է նախկին մինիստր-նախագահ Կէրբէր։

ՊԱՐԻԶ.—Պապի ցանկութեան համաձայն, Ֆրանսիայի բոլոր եկեղեցիներում կատարվում են աղօթքներ հաշտութիւն պարգևելու մասին։ Աղօթքի ժամանակ կարդինալները քարոզ են կարդում։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ.—Բուքարեստից տեղեկացնում են, որ պաշտօնական թերթում կարգադրութիւն է տուած, որ այն բոլոր ան
ու հաստատութիւնները, որոնք ունեն
ձի, արճճի, նիկէլի, ցինկի և նման մե
ների պաշար, պէտք է յայտնեն նրանց
րակի մասին կառավարական մարմինն
Այս կարգադրութիւնը բղխում է Գոնվ
ների մինիստրից և նրա մէջ մասնաւոր
է, որ մետաղները յատկացվելու են պա
րազմական նպատակների համար։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆ

(Պետ. Հեռ. Գործ.)
26 յունվարի

ԹԻՖԼԻՍ.— Լոյս յունվ. 26-ի գիշերը
կալվածքում, Շորապանի գաւառի Սաչխ
գիւղում ուղեղի արիւնահոսութիւնից վ
ճանվեց 75 տարեկան հասակում շատ յ
նի վրաց բանաստեղծ Ակակի Ծերեթե
որ համդիսանում էր խոշոր անձնաւո
թիւն 60-ական թւականների վրաց
ծիչների շարքում։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Պարիզում ձեռք են առնված ար
կարգ պաշտպանողական միջոցներ ի նկ
ունենալով, որ սպասվում է ցեպելինն
յարձակում։

◆ Պեկինից հաղորդում են, որ Չին
տանը վճռել է մերժել Ճապօնիայի պահ
ները, որոնք խախտում են նրա սուվ
իրաւունքները։ Լուրերի համաձայն, Ճա
նական դեսպանը պատասխանի համար տ
է ժամանակամիջոց մինչև փետրվարի

◆ Պարիզից տեղեկացնում են, որ
տերազմի սկզբից Ֆրանսիայում գրա
են գերմանական և աւստրիական հպատ
ների 6188 ստացուածք։

◆ Բուխարեստից հեռագրում են,
աւստրիացիները փորձել են մեծ թւով
ժեր անցկացնել Ադըկալէ կղզին,
սերբիական բատարէան կործանիչ կր
արգելեց գետը անցնել։

◆ Բուլգարիայից ստացված տեղեկու
համաձայն, սերբ-բուլղարական յարաբե
թիւնները լաւանում են, շնորհիւ իշ
Տրուբեցկոյի ջանքերի։

◆ Լիբկնեխտը, զինուորական մինիս
կարգադրութեամբ, ազատված է զինու
կան ծառայութիւնից։

◆ Բեռլինի գլխին սաւառնում է
ուրուականը։ 1200 ոստիկաններ պահ
նում են խանութները։

◆ Աւստրիական պաշտօնական տեղե
թիւնների համաձայն, աւստրիական բան
կորուստը 250,000 մարդուց չի անցնում

◆ Լուր է պտտում, թէ աւստրօ-ռու
նական սահմանում սկսվել է հրացանաձ
թիւն։ Մի աղբիւրի համաձայն, Ռումինի
հանդէս գալը տեղի կունենայ մօտ ա
գայում, մի ուրիշի՝ այդ հանդէս գ
յետաձգվում է։

ՌԱԶՄԱԿԱՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Սեփական թղթակցից)

Լեհաստանից

Արդէն երեք շաբաթ է՝ շարունակվում
լարված կռիւները Բզուրա և Րավկա
տերի վրայ։

Գերմանացիները Սոխաչևից հեռաց
իջել են դէպի Բոլիմով, իսկ այնտեղ
դէպի Սկերնևից, կամենալով այդպի
մօտենալ Վարշավային։

Սպառելով իրանց ողջ կենդանի ուժ
այսինքն հետևակ և հեծեալ գնդերի զօրա
սերը, գերմանացիները գործի են դրել իր
հրէշաւոր թնդանօթները, որոնց մէջ
42 սանտիմետրանոց մօրտիրները։ Ակա
տեսների ասելով, այդ նոր հրէշները իր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՔՐԴԵՐԸ

II

Սօուջ-Բուլաղի և Սարդաշտի միջև գտնվում է Մարգեավարը, ուր ապրում է հարգի աշիրաթը։ Սրանց բայաթը չլօներ՝ քրիստոնեայ քիւրդեր են, միևնոյն կրմանջների վիճակով։

Սրան կցված է Թարգեավար գաւառը, ուր ապրում է նոյնպէս հարգի ցեղը՝ իր հաստատաբնակ կրմանջով։ Մարգեավարում ապրում են նոյնպէս բէյզադաներ, որոնք ոչնչով չեն տարբերվում Զղաթի գետի ափերին ապրող ցեղակիցներից։

Մարգեավարից և Թարգեավարից հարաւ ապրում են Իւշնու գաւառում զարզաները, որոնք ամբողջ Քիւրդստանում յայտնի են իրանց ազնիւ յատկութիւններով։ Զարզաների մէջ չի նկատված ո՛չ գող, ո՛չ աւազակ, ո՛չ էլ մարդասպան։ Զարզաները հմուտ արհեստաւորներ են, ճարպիկ վաճառական, գրագէտ և, որ գլխաւորն է, ոչ միայն հաստատաբնակ են, այլև անչափ ջանասէր և մաքրասէր։ Սրանք աշիրաթ չեն, այլ ամբողջապէս ազատ մնացած մի ցեղ, որ դարերից ի վեր իրանց շրջապատող քիւրդերին մատակարարել է զէնք, զարդ և այլ իրեր։

Սրա մօտ է Բանա գաւառը, ուր բնիկ ժողովուրդը հողագործ, այգեպան է և մթերք է հայթայթում շրջապատին։

Սօուջ-Բուլաղի հիւսիս արևմտեան կողմը, Ուրմիայի լճի և Թիւրքական սահմանի միջև գտնված՝ Բրադոստ, Սոմայ, Չահրիկ և Ղօթուր գաւառների մէջ ապրում են շիկակ աշիրաթներ, որոնք թէ խաշնարած են և թէ իրանց կրմանջ բայաթն ունեն, երկրագործութեամբ են պարապում։ Սրանք պահում են մեծ մասամբ ոչխար, կով և ձի, որոնց երամները վխտում են լեռների լանջերին։ Այս շիկակ աշիրաթը անչափ ստոր է մտաւորապէս՝ Սօուջ-Բուլաղի քիւրդերից, նոյնպէս նուազ ճարպիկ զինավարժութեան մէջ։ Զարագործութիւնը և նենգաւորութիւնը շիկակների մէջ ծայրայեղութեան է հասած. որոնք սերտօրէն կապված են Վանի վիլայէթի քիւրդ աշիրաթների հետ։

Շիկակներից դէպի հիւսիս, Չալդըրան եւ Աւաջիկ գաւառակներում ապրում են հէյդարանցիները, որոնք բոլորն էլ վրանաբնակ են, ունեն իրանց ձմերանոցները։ Հէյդարանցիները քաջ են անդէն ժողովրդի առաջ և «կարիճի» նման փախչող են, երբ իրանց շուրջը մի քանի ընկերի դիակ փռվի։ Հէյդարանցիները աշիրաթ են, բայաթ չունեն և իրար մէջ խաղաղութիւն չունեն։ Սրանք լաւ աւազակներ են. Պարսկաստանում գողացածները Թիւրքիայում են հալեցնում, Թիւրքիայից բերած աւարը՝ Պարսկաստանում։

Մեր նկարագրած ղէբուքրի, բէյզադա, խանզադա (միքրի), մամաշ, փիրան, զէուրգի, զարզա, չլօ, շիկակ և հէյդարան բոլոր քիւրդերը սիւննիներ են, Թիւրքիային յարած։ Այս քիւրդերը չեն ուզում, որ իրանց ձուլվեն թիւրքերի հետ, երբէք, նրանք ընդհանրապէս ատում են թիւրքութիւնը, այլ օսմանեան սուլթանների՝ խալամի խալիֆի հովանաւորութեան տակ ցանկանում են անկախ և ինքնավար ապրել։ Նրանց մէջ ձգտում չը կայ երբէք միանալու, քանի որ թիւրքերին ընդհանրապէս ատում են, այլ ուզում են խալիֆաթի ոյժից օգտվել, շիա պետութիւնից բաժանվել և անկախ ապրել։

Հէյդարանցիներից հիւսիս-արևելք ապրում են Մակուի լեռների մէջ կամ, ինչպէս սովորութիւն է դարձել մեր մէջ ասել, Մակուի խանութեան մէջ ջէլալի, զիլանի և միլանի վրանաբնակ քիւրդերը։ Այստեղ էլ ժողովուրդը երկսեռ է բաժանված, աշիրաթ և բայաթ։ Այս գաւառում աշիրաթն այնքան բազմացել է, որ բայաթը պարտաւորվել է խոյս տալ, փախչել երկրից, գնալ ուրիշ տէր գտնել։ Այստեղ ինքը աշիրաթը —զիլանի, միլանի, ջէլալի—դարձել է երևանցի Թուրք Ալի-խան մուլքաշիրի որդու՝ Թէմիր-խան սարդարի ժառանգների իշխանութեան տակ բայաթ։ 75 տարուց ի վեր մակուեցին չէ կարողանում ազատվել Մահմէդ-շահի և Հաջի Միրզա Աղասիի նշանակած Թէմիր-խան սարդարի ինքնագլուխ իշխանութիւնից և տեղական քիւրդերը չեն կարողանում ազատվել այս հրէշների ճիրաններից։

Թէմիր-խանը երբէք տոհմական խան չէ եղել և ո՛չ էլ Մակուի մէջ մի թիզ հող են ունեցել նրա պապերը։ Երևանի Սարդարաբ գիւղացի Ահմէդը Նադիր-շահի մօտ 1740 թւականներին դռնապան փարրաշ է լինում։ Սա կարողանում է ղզլար մտնել Մակու և պատսպարվել Նադիրի անկումից յետոյ, երբ վերջապէս աղա Մահմէդ Ներքինին կարողացաւ ձեռք ձգել Իրանի շահն-շահի թագը, սա սկսեց վարձատրել Նադիրի և և նրանից յետոյ գահակալող շահերի ցեղական հակառակորդներին։ Դռնապան Ահմէդի որդին՝ Նադիրի կնոջից ծնված Մուրթուզան գնաց Թաւրիզ, ներկայացաւ Ներքինի շահի եղբօրը՝ Ջհանկիր-միրզային և խանութիւն ստացաւ 1792 թ.։ Մակուի վիճակի պետական հասոյթների հարկահաւաք դարձաւ առաջին անգամ Մուրթուզա-Ղուլի խանը։ Սրա որդին՝ Ալի-խանը Երևանի սարդարի Մակուի հարկահաւաքն էր։ Երբ Երևանին տիրեցին ռուսները, Մակուն յանձնվեց Թաւրիզին, որով վերջացաւ Թէմիր-խանի պապերի մուլքաշիրութիւնը՝ հարկահաւաք գործը։ Իսկ շնորհիւ Հաջի Միրզա Աղասիի սադրազամութեան, Թէմիր-խանը կուլ տուեց Մակուն, զրկեց ջէլալի, զիլանի և միլանի ցեղերի ցեղապետներին իրանց իրաւունքներից, յափշտակեց գիւղերը և կազմեց ներկայ Մակուի խանութիւնը։

Պարսկաստանում տիրող անսահման բռնակալութեան, ուժեղի կատարած անվերջ անիրաւութեան շնորհիւ՝ Մակուն խլել են սարդար Թէմիր խանն ու որդիները, և 75 տարվայ ընթացքում հնար չեղաւ նրանց դուրս հանել այդ կալուածքից։ Մակուի խանութեան կազմութիւնը թարմ է և բոլորն էլ յիշում են, պատմում. բայց ո՞վ կարող է յիշել, թէ ինչպէս աշիրաթներն եկան ու տիրացան Սօուջ-Բուլաղի և շրջապատի բայաթներին և հիմնեցին իրանց իշխանութիւնները ստրկացած բնիկ կրմանջների գլխին, որոնք այսօր ստրուկ բայաթի վիճակումն են ապրում։

Դէբուքրի Իբրահիմ աղան, որ դէբուքրի ցեղերի մէջ ամենից տարեցն էր, Թաւ
բի գիւղի և վաակի տէրն ու տնօրէնն
1894 թ. ինձ պատմեց, որ բոլոր Դէբու
աղայեանները գաղթել են Պարսկաս
Թիւրքիայի Մուսուլի շրջանից XVIII դ
սկիզբներին. այդ տարին Իբրահիմ-աղա
բուքրին մօտ 95 տարեկան էր և բոլ
վին ուշքը վրան։ Նա յիշում էր իր հօ
պապի և պապի հօր անունները։ Վերջ
Նադիրի խանակութեան շրջանին կարող
ցել էր անցնել Սուլէյմանիէ վիճակը և
բել բայաթին։ Իբրահիմ-աղայի պապ
էր սերված Դէբուքրի Ղադըր աղան,
ամբողջ Սօուջ-Բուլաղի շրջանում ազդեց
թիւն ունէր, նոյնպէս այդ արշաւա
անդամների ժառանգներից էր։

Ինչպէս երևում է, քիւրդերին կրմ
բայաններին չեն տուել նոյնպէս խղճի ա
տութիւն։ Քիւրդական շէյխերը պահան
են սիւննի դաւանանքն ընդունել կամ մ
նել, Ղուրանի դրած պահանջի համաձ
Ամբողջ Ատրպատականի քիւրդերը կրմ
բայաները իրանց տիրող աշիրաթների
սիւննի են, բացի Մակուի քիւրդերի
սից, որոնք շիա են։ Երևում է, որ Թէմ
խանի ժառանգները կարողացել են
գործութիւն ունենալ և շիիզմը տարա
բայց ո՛չ ամբողջ ցեղերի մէջ, այլ
սամբ։

Ատրպատականի քիւրդերի մասին
ընդհանուր տեսութիւնից յետոյ անց
Իրանի միւս նահանգների քիւրդերի
ռօտ տեսութեանը, որոնք բոլորն էլ
ված են Սօուջ-Բուլաղի քիւրդերի հետ
վորութիւններով, լեզուով և բարքերով։

Ատրպա

կրակը ուղղել են մեր խրամատների կողմը, փորելով երեք սաժէն խորութեամբ փոսեր։ Սակայն չը նայած այդօրինակ սարսափելի հնարքերին, Կռուպպի ստեղծագործութիւնները պէտքական են միայն բերդեր աւերելու գործում և ոչ թէ հողային ամրութիւններ քանդելու մէջ։ Սակայն գերմանացիներին, ըստ երևոյթին, ուրիշ չէ մնում անել, քան գործի դնել իրանց ծանր թնդանօթները, բաւական է որքան կորուստներ ունեցան մարդկանցով…

Քանի գնում, գերմանացիները այնքան աւելի կատաղի և յամառ են դառնում իրանց յարձակումների մէջ։ Նրանք ամեն բան անում են, որպէսզի կտրեն մեր կենտրոնը և, ինչ գնով էլ լինի, համնեն Վարշավային։ Նրանք այն աստիճան փափայում են այդ միտքը, որ, հակառակ իրանց սովորութիւններին, սկսել են գիշերային յարձակումների և սւինամարտի դիմել։ Նրանք աշխատում են օգտագործել ռազմական տակտիկայի և ռազմագիտութեան բոլոր ձևերը, բոլոր միջոցները, որպէսզի գոնէ համնեն իրանց նուիրական երազին՝ տիրել Վարշավային։

Սակայն լեհական մայրաքաղաքը ոչ մի կերպ չէ ընկնում գերմանացիների ձեռքը։

Եւ կարելի է լիակատար կերպով հաւատալ, որ մերոնք ոչ մի կերպ չեն տայ Վարշավան, եթէ այդ պահանջէր նոյն իսկ ծանր և մեծ զոհեր։

Պէտք է նկատել, որ Վարշավայի նշանակութեան մասին եղած նախկին հայեացքը բոլորովին փոխվել է։

Եթէ սկզբում, գերմանացիների առաջին յարձակման ժամանակ, կարծում էին, որ Վարշավան միայն բարոյական նշանակութիւն ունի, այսինքն՝ նրա անկումը կարող է անդրադառնալ ամենքի վրա միայն բարոյական կողմից, այժմ արդէն Լեհաստանի մայրաքաղաքը ստացել է անկասկած ռազմագիտական նշանակութիւն, խիստ կարևոր այն մտքով, որ անմիջական ծառայութիւն է անում մեր զօրքի թիկունքին։ Զի որ հիւսիս-արևմտեան զօրաճակատի բոլոր գծերը տանում են դէպի Վարշավա և այստեղ են ստանում իրանց յետագայ ուղղութիւնը։ Վարշավայի ռազմագիտական նշանակութեան այսօրինակ պայմաններում, միանգամայն բնական է, որ լեհական մայրաքաղաքը պէտք է պահեն, ինչպէս աչքի լոյս։ Ի հարկէ, քաղաքի բարոյական նշանակութիւնը մնացել է նախկին ույժի մէջ, որը կազմում է մի աւելորդ պլիւս նրա ռազմագիտական արժէքի։

Առաջապահ դիրքերը այցելելու ժամանակ ինձ պատմեցին, որ նշաններ են երևացել այն մասին, թէ գերմանացիները արդէն սկսել են նահանջել Բզուրա և Րավկա գետերից դէպի Լովիչ։ Թէ որքան ուղիղ են այդ տեղեկութիւնները, առ այժմ դժուար է ճշդել։ Բայց անկասկած է այն, որ մի քանի շրջաններում մեր գնդերը կռւի են բռնվել գերմանական յետապահ մասերի հետ, որ ցոյց է տալիս, թէ նրանք նահանջում են։ Այդ պատճառով ենթադրում են, որ գերմանացիների գլխաւոր ույժերը գաղտագողի նահանջում են և իրանց նահանջը ծածկում ծանր թնդանօթների և յետապահ մասերի տակ։

Գերմանացիների նահանջը Վարշավայի մօտից (եթէ կարելի է Սօխաչևը և Սկերնևիցը Վարշավայի «մօտ» համարել) ցոյց է տալու ֆելդմարշալ Գինդենբուրգի «յաղթական» ծրագրի լիակատար խորտակումը։ Իսկ այդ խորտակումը իր հերթին անդրադառնալու է Միջին-Պրուսիայի սահմանների վիճակի վրա, ուր փոխադրվելու են ռազմական գործողութիւնները։ Մեր զօրքերը Սիլեզիա մտնելու ժամանակ գործ են ունենալու Գինդենբուրգի քայքայված և փչըված բանակի հետ։ Իսկ առ այժմ Բզուրայի մօտ կռիւները շարունակվում են և իրանց յետագայ զարգացումներով վկայում են այն մասին, որ գերմանական զօրքը գերազանցապէս լարում է իր ույժերը։

Առանձնապէս բնորոշ են նրանց գիշերային յարձակումները։

Ես առիթ ունեցայ մի երկու անգամ տեսնել այդ յարձակումները, և պէտք է խոստովանեմ, որ դրանք ծանր տպաւորութիւն են թողնում։

Նախ քան յարձակման դիմելը, գերմանացիները աշխատում են թշնամու տեղը լուսաւորել, որը անելու համար բացի սովորական լուսարձակներից և շրջակայ գիւղերը հրդեհելուց՝ նրանք լուսաւորելու նոր միջոց են հնարել։ Դրանք՝ այսպէս անուանված հռոմէական մոմեր են։ Սրանք արձակվում են առանձին հրացաններից և շատ բարձրութեան վրա պայթում, ու դանդաղօրէն իջնելով լուսաւորում են հեռաւոր տարածութիւններ։

Առաջին տպաւորութիւնը այդ մոմերից լինում է ծանր, երկիւղ ազդող, սակայն ոչ զուրկ փոքր ինչ «հանդիսաւորութիւնից»։ Լուսաւորելով վայրերը, այդ մոմերը հնարաւորութիւն են տալիս գերմանացիներին դասաւորելու իրանց ույժերը գիշերային յարձակման համար։ Իսկ մերոնք արդէն գիտեն այդ մոմերից, որ յարձակում է պատրաստվում, և իրանք պատրաստվում են ետ մղել այն։

Ահա հռոմէական մոմերի հեռաւոր լոյսերի տակ իրար են խառնվել գերմանական մութ մասսաները. նրանք բաժանվել են մասերի և շարժվում են մեր կողմը։ Արտիլերիան լուռ է։ Չէ լսվում հրացանաձգութիւն ոչ մի տեղ։ Գերմանացիները մօտենում են ոչ թէ խիտ սիւներով, ինչպէս այդ անում են նրանք միշտ, այլ երկար շղթայով և ուժեղացած թևերով։ Բոլորովին մօտենալով մեր խրամատներին, նրանք «hoch» աղաղակով յարձակվում են մերոնց վրա, կամենալով սրանց դուրս քշել դիրքերից։ Բայց մերոնք պարապ չեն։ Նրանք գերմանացիներին թողնում են մօտիկ և այնուհետև սկսում են գնդակացիրներից գնդակ թափել այնպիսի արագութեամբ ու եռանդով, որ գերմանացիները իբր թէ սկսում են ետ դառնալ, սակայն, նրանց ետևի շարքերը միանում են առաջիններին և սկսվում է յարձակումը։

Գիշերվայ խաւարի մէջ, առանց մոմերի և լուսարձակի, մարդիկ բռնում են իրար կոկորդ, խեղդում, խփում իրար հրացանի կոթերով և այս ամենը առանց որևէ աղմուկի և աղաղակի։ Խաւարը ծածկում է նրանց մասսաները, բայց զգացվում է, որ այստեղ հոսում է կենդանի արիւն, մարդիկ դառնում են խեղանդամներ, մեռնում են երիտասարդ կեանքեր։

Ամեն մի կռիւ տևում է սովորաբար 3—4 ժամ։ Լինում են, ի հարկէ, կռիւներ, որոնք տևում են ամբողջ գիշեր։ Բայց այդպիսիք համեմատաբար քիչ են, և ետ են մղվում միայն այն ժամանակ, երբ գերմանացիները ամբողջովին արբած են լինում…

Առաւօտեան, երբ դիտում ես գիշերվայ կռիւների դաշտը, ցնցվում ես սարսափից… այստեղ և այնտեղ ընկած են մերոնց և գերմանացիների դիակները, գրկած իրար մահվան պայքարի ժամանակ և այժմ սուս բարեկամական հրաժեշտ են տալիս իրար։ Իսկ շրջապատը ամբողջովին արիւն է, արիւն անվերջ, մի տեղ լճակներով, մի ուրիշ տեղ ամբողջ գծերով, մի այլ տեղ կաթիլներով։

Գերմանացիները այժմ բացի իրանց կռւելու ձևերը գործադրելուց՝ օգտվում են և ուրիշների կռւելու միջոցներից։ Նրանք ընտելանում են սւինակռւին, որին նրանք տանել չէին կարողանում։

Այս ամենը միայն նշաններ են գերմանական ձեռներէցութեան և ռազմական տեխնիկայի դանդաղօրէն քայքայվելու։

Այնտեղ, ուր վերանում է ինքնուրոյնութիւնը, պարտադիր նմանողութեան նկատումով, այնտեղ նոր երևոյթը որքան էլ կենսունակ և առողջ լինի, չէ կարող ապրել։

Իսկ գերմանացիների ինքնուրոյնութեան կորուստը նշանակում է միայն մի բան. պրուսական տեսակի միլիտարիզմը հետզհետէ քայքայվում է, նախապէս յայտնելով Գերմանիայի ռազմական հզօրութեան շուտափոյթ խորտակումը։

Որքան շուտ կատարվի քայքայման այս պրոցեսը, այնքան լաւ կը լինի Եւրոպայի ժողովուրդների բաղդի և կեանքի համար։

Ս. Շահնազարեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ

Ստացանք 1) Թիֆլիսում, բաթումաբնակ Արշամ և Զաբէլ Չիլինկիրեաններից, իրանց դուստր Սրբուհու հարսանիքի հանդէսի փոխարէն, յանձնելու Նպաստ. Ընկերութեան՝ 500 ր., 2) Գրիշինօ կայարանից, Գ. Տէր-Գրիգորեանից, հանգանակված այդտեղ և մերձակայքում՝ 87 ր., 3) Գրիշինօ կայարանից, Բախմուտ քաղ. հանգանակված նոյն Գ. Տէր-Գրիգորեանի միջոցով՝ 25 ր., 4) Հաղբուլթից, եղբարք Արտաշէս և Աւետիս Ն. Աւետիսեաններից՝ 5 ր., 5) Սումից (Խարկովի ն.), Սողոմոն Ոսկանեանից՝ 5 ր., 6) Թիֆլիսում, Յովհ. Ոսկանեանի ձեռքով Կար. Ոսկանեանի անուանակոչ. օրը հաւաքված՝ 2[illegible] ր. 50 կ., 7) Կուշկայից, հանգանակված [illegible] Խուբլարեանի, Թ. Խասապեանի, Ա. Ս[illegible]լիքսեթեանի, Գ. Մարութեանի և Ս. Բաղ[illegible]սարեանի ձեռքով, դեկտ. ամսվայ վճարը՝ 9[illegible] ր. 25 կ., 8) Ղզըլ-Արվատից, Անտոն Աւե[illegible]իսեանից, ի յիշատակ նորոգ հանգուցեալ Սարգիս Ղալախանցեանի՝ 25 ր., 9) Թերմեզից, Արսէն Սափարեանից, հանգանակված յունվարի 5-ին «Աւետիս» ասելով՝ 98 ր.։ 70 կ. (նամակը կը տպվի), 10) Թիֆլիսում, Պերճ Գայֆէճեանից, հանգուցեալ Յ. Ղույումճիպաշեանի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն, յանձնելի Նպաստամ. Ընկ.՝ 10 ր.։ Գումարը 894 ր. 45 կ.։ Նախորդ ստացված 7815 ր. 73 կ. գումարի հետ (տես «Մշակ» № 18) ստացել ենք 8710 ր. 18 կ.։

Ց Ո Ւ Ց Ա Կ

Ալուպկայի հայ նուիրատուների

(Յօգուտ հայ կամաւորների 50 ր., յօգուտ փախստականների՝ 83 ր. 50 կ.)

(Տես «Մշակ» № 8)

Յ. Յովհաննեան 10 ր., Պ. Աստուրեան 6 ր., Կ. Խաչատրեան, Մ. Ծաղօյեան, Խ. Եղիազարեան և Յ. Խաչատրեան 5-ական ր., Ս. Պարսեան, Մ. Առաքելեան, Յ. Յովհաննեան, Յ. Ղալինեան, Հ. Աւետիսեան, Մ. Գրիգորեան, Ե. Գասպարեան, Ս. Սալվեան, Ա. Մարտիրոսեան, Մ. Քամալեան, Վ. Սաղօյեան, Մ. Տէրօյեան, Մ. Սաղօյեան, Ա. Յովիկեան, Ա. Բարսեղեան, Գ. Սաքիեան, Գ. Սիմոնեան և Ա. Սահակեան 3-ական ր., Թ. Սիմոնեան, Ե. Աւագեան, Խ. Խաչատրեան, դաւացի Զաքար, Բ. Թարօյեան, Կ. Սարգիս, Մ. Խաչատրեան, Մ. Գրիգորեան և Ց. Վարդանեան 2-ական ր., Մ. Ղազարեան, Մ. Մակարեան և Ա. Մկրտչեան 1 ր. 50-ական կ., Պ. Մանուկեան, Գ. Ցարդեան, Յ. Աստուրեան, Ար. Ղազարեան, Տ. Մուրադեան, Վ. Սիմոնեան, Պ. Նազօյեան, Ա. Մանուկեան, Ճ. Ցարօյեան, Յ. Մկրտչեան, Մ. Դանիէլեան, Ս. Խաչատրեան, Ար. Սարգսեան, Ս. Մարտիրոսեան, Մ. Նախօյեան, Գ. Մարտիրոսեան, Ա. Ցակոբեան, Հ. Սարգսեան, Տ. Յովհաննիսեան և Թ. Գրիգորեան 1-ական ր.։ Ընդամենը 133 ր. 50 կ.։

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՈՒՄԱՅԻ ՆԻՍՏԸ

(Յունվարի 26-ի նիստը)

Նախագահում է Ա. Ի. Խատիսեան։

Ներկայ են վարչութիւնը ամբողջ կազմով և 30-ի չափ իրաւասուներ։

Դուման լսում է նախորդ նիստի արձանագրութիւնը և հաստատում։

Օրակարգի խնդիրներին անցնելուց առաջ, նախագահը հաղորդում է դումային վրաց յայտնի բանաստեղծ իշխ. Ակակի Ծերեթելիի մահը։ Մի քանի հակիրճ խօսքերով բնորոշելով հանգուցեալին որպէս պօէտի և որպէս գործչի, Ա. Ի. Խատիսեանը շեշտեց, որ նա վրաց ազգային ոգու ու հանճարի մարմնացումն էր և ուստի նրա կորուստը ազգային դժբաղդութիւն է։ Խօսելով այն մեծ ժողովրդականութեան մասին, որ վայելում էր պօէտ Ակակի Ծերեթելին, ճառախօսը նկատեց, որ նա յարգի էր և Թիֆլիսի ազգաբնակութեան համար. ի նշան այդ յարգանքի, դուման դեռ սրանից մի քանի տարի առաջ, երբ տօնվում էր նրա յոբելեանը, քաղաքային դպրոցներից մէկը (Դաւիդովսկայա հրապարակի վրա) անուանեց նրա անունով. մի բացառիկ պատիւ, որին երբեք չէ արժանացել քաղաքային ինքնավարութեան մէջ չաշխատող ոչ մի գործիչ։ Որովհետև սովորաբար այդպիսի մեծ ժողովրդականութիւն վայելող հանճարաւոր գրողների տեղը մնում է ամայի, մաղթում է, որ վրաց գրական անդաստանում նրա տեղը չը մնայ բաց։ Վերջում յայտնելով, որ քաղ. ինքնավարութիւնը ևս համակված վրաց ազգին հասած այդ մեծ վշտով, կայացրել է հետևեալ որոշումները. կատարել տալ հոգեհանգիստ հանգուցեալի անուան քաղաքային դպրոցում, պսակ դնել քաղաքային ինքնավարութեան կողմից, եթէ Թիֆլիսում տեղի ունենայ թաղումը՝ ներկայ լինել ամբողջ կազմով, իսկ եթէ թաղվի իր հայրենի գիւղում՝ այդ դէպքում լիազօրել մասնակցելու այնտեղ թաղմանը Գ. Դ. Ժուրուլին և ցաւակցութիւն յայտնել հանգուցեալի հարազատներին, որը արդէն հեռագրով յայտնված է հանգուցեալի այրուն և որդուն։ Քաղաքագլխի առաջարկութեամբ, դուման յոտնկայս յարգեց հանգուցեալի յիշատակը։

Ապա դուման անցաւ օրակարգի խնդիրներին։

Իրաւասու Գ. Ի. Թօյիձէի մահվան պատճառով քաղաքագլուխը թոյլտուութիւն խնդրեց հրաւիրելու առաջին թեկնածու Իվան Սերգէյեվիչ Նեմաշկինին։ Վերջինս պաշտօնաթող զինուորական է։

Միաժամանակ քաղաքագլուխը տեղեկացրեց դումային, որ քաղաքների միութիւնը լսելով կովկասեան բիւրոյի կարծիքը՝ սկզբունքով որոշել է միանուագ վարձատրութիւն տալ Թօյիձէի ընտանիքին, և որ 10 օրից յետոյ յայտնի կը լինի արդիւնքը՝ այդ մասին կը տեղեկացվի այն ժամանակ դումային։

Ինչպէս և պէտք էր սպասել, այդ երեկոյեան հերթական նիստի գլխաւոր խնդիրը մատակարարողական գործի վիճակն էր։

Վարչութեան անդամ Մ. Ա. Զաքար տուեց զեկուցում այն դրութեան մասին, որի մէջ գտնվում է այս վերջին օրերս Թիֆլիսը, միևնոյն ժամանակ ծանօթացնելով դումային, թէ ինչ միջոցներ է ձեռք առել և քայլեր արել քաղ. վարչութիւնը մթերքների գլխաւորապէս ալիւրի մատակարարութեան գործը կարգաւորելու համար։ Այդ առիթով իրաւասուներին ուղարկված էր տպագրված զեկուցում։

Մ. Ա. Զաքար պարտք համարեց ուղղել այնտեղ սպրդած մի սխալ, այն է, որ օրական ստացվում է Թիֆլիսում 4 վագոն մթերքներ, մինչդեռ ստացվում է 14 վագոն։

Այդ զեկուցումից պարզվեց, որ իրերի դրութիւնը այնպէս է դասաւորվել, որ քաղաքային վարչութիւնը յայտնում է համապատասխան իշխանութեանը, ինչպէս զինուոր. հաղորդակցութեան բաժնի պետին և Ռոստովի շրջանային կոմիտէտին, քաղաքի կարիքների համար պէտք եղած վագոնների քանակն ու մթերքների տեսակը։

Վարչութիւնը խնդրել էր Թիֆլիս քաղաքի պէտքերի համար տալ օրական 60 վագոն, նկատի առնելով այն հանգամանքը, որ մօտակայ քաղաքները ևս օգտվում են Թիֆլիսից։ Բայց յատկացված է 25 վագոն բացառապէս Թիֆլիս քաղաքի համար։ Այդքանն էլ կը բաւարարէր, եթէ միայն ապրանքների դասաւորութիւնը կատարվէր այնպէս, որ գերակշռող լինէին մթերքները։ Օրինակ. նորերս ստացվել էր 100 վագոն. պարզվեց, որ դրանից 6 վագոն միայն ալիւր է, մնացեալը շաքար և այլ այդպիսի երկրորդական իրեր։ Մենք ուշադրութիւն ենք հրաւիրել այդ հանգամանքի վրա. նրանք առաջարկում էին, թէ հնարաւորութիւն չը կայ ճիշդ որոշելու վագոնների քանակը մթերքների տեսակի համաձայն։ Ցամենայն դէպս այժմ կազմված է միջվարչական մատակարարական մարմին՝ կազմված երկաթուղային, զինուորական իշխանութեան քաղաքային, բանկային և այլ հաստատութիւնների ներկայացուցիչներից. յունվ. 25-ին քաղաքագլխի նախագահութեամբ տեղի է ունեցել այդ մարմնի նիստը, ուր մշակվել է հրահանգ և ամսիս 26-ին ներկայացվել ի հաստատութիւն կոմենդանտին։ Այդ հրահանգի համաձայն՝ վագոնների բաշխումը, ըստ քանակի և ըստ ապրանքների տեսակի, յանձնվում է միջվարչական մարմնին։

Ամսիս 25-ին ստացվել է այնքան վագոն ալիւր, որ քաղաքը ապահովված է 4 օրով։

Բացի դրանից՝ Ռոստովից մինչև Թիֆլիս գծի վրա այժմ կուտակված է 900 վագոն ալիւր, գլխաւորապէս Բալաջարում. դիմումն է արված, և առաջին հերթում կուղարկվեն այդ ալիւրները։

Այդ առիթով տեղի ունեցած մտքերի փոխանակութիւնը պարզում է, որ իրաւասուներից ոմանք գտնում են դրութիւնը ոչ բաւարար և կրիզիսը չանցած։

Ա. Բաբով կարծում է, որ ալիւր չը ստացվելու պատճառն այն է, որ կօնուսամենտները անուանական են, այլ ոչ ըստ պահանջի և առաջարկում է միջնորդել վերացնելու անուանականը։

Վարչ. անդամ Մ. Զաքարի տուած բացատրութիւններից պարզվում է, որ կօնուսամենտների խնդիրը չի սահմանափակում առևտուրը ներկայ դէպքում, ինչպէս ցոյց է տուել փորձը։

Խունդաձէ առաջարկում է քաղաքին բանալ սեփական փուռեր։

Սուլխանով անում է գործնական առաջարկ՝ յատուկ ներկայացուցիչ ուղարկել Ռոստով, շրջանային կոմիտէտին մասնակցելու։ Ներկայացուցիչը կարող էր պաշտպանել ոչ միայն Թիֆլիսի, այլև ամբողջ Անդրկովկասի շահերը, ու անձամբ էլ կը հոգար որ ոչ միայն խոստացված վագոններն ուղարկվէին, այլ և ցանկալի ապրանքները ուղարկվէին։

Յ. Խունունց առաջարկում է պաշտօնապէս յայտարարել թերթերում ամենայն օր, թէ քանի վագոն է ստացվել և ինչ ապրանք, որպէսզի իշխանութիւնն էլ, ազգաբնակութիւնն էլ տեղեակ լինեն դրութեանը։

Ս. Մազմանեան գտնում է, որ հարկաւոր է միջնորդութիւն զարթեցնել բարձր իշխանութեան առաջ, որպէսզի թէ Վլադիկավկազի և թէ Անդրկովկասեան երկաթուղին հերթից դուրս ընդունեն և ուղարկեն ալիւրի բեռները, այսպէս ասած՝ մտցվի վարչական ընդհանուր կարգ։

Ի. Մ. Դօլուխանեանը, նկատի առնելով որ իրերի ներկայ դրութեան մէջ ազգաբնակութիւնը պատասխանատու է համարում քաղաքային ինքնավարութեանը, գտնում է, որ պէտք է բարձրաձայն յայտարարել, թէ քաղաքային վարչութիւնը ամեն միջոց ձեռք է առել, դիմել է ուր հարկն է, ձանձրացրել է ամենքին, բայց և այնպէս, իրանից անկախ, 900 վագոն ալիւր էլի կանգ են առել ճանապարհին։ Պատասխանատուութիւնը այժմ պէտք է թողնել միջվարչական կոմիտէտին և յայտնել նրան, որ քաղաքին հարկաւոր է այսքան վագոն այս-ինչ ու այն-ինչ ապրանք։ Առարկում է այն առաջարկների դէմ, թէ քաղաքը ինքը պէտք է ալիւր բերել տայ, փուռեր բանայ, քանի որ խնդիրը վերաբերվում է բերելուն միայն։

Նախագահը, յայտնելով որ վարչութիւնը ամեն միջոցի դիմում է մատակարարական գործը կարգաւորելու համար, եզրափակում է եղած առաջարկները, ալիւրավաճառութեան և հացի փուռը խնդիրը թողնելով յետագային, և ձևակերպում, որ դուման լսելով վարչութեան զեկուցումը և այդ խնդրի առիթով եղած առաջարկները՝ ցանկութիւն է յայտնում, որ քաղաքային վարչութիւնը ամեն միջոց ձեռք առնի անհրաժեշտ վագոնների թիւը ստանալու և առաջին հերթում ալիւրի մատակարարմանը յատկացնելու համար, որպէսզի, նկատի առնելով երկաթուղային հաղորդակցութեան այժմեան նորմալ վիճակը, ապահովի Թիֆլիսը առնուազն երկու շաբաթվայ պաշարով։

Այնուհետև քաղաքագլուխը տուեց հաշիւ քաղաքային կենտրոնական կոմիտէտի գործունէութիւնից, որից երևաց, որ Թիֆլիսում հաւաքված են այժմ 3600 փախստականներ, մեծ մասամբ ասորիներ՝ 2000 հոգի։ Նրանք ստացել են կոմիտէտից 3000 րուբլի։ Ասորիների մի մասը ցանկութիւն է յայտնում վերադառնալ հայրենիք Ուրմիա, իսկ մի մասը՝ Հիւսիսային Կովկաս։ Հայ գաղթականների թիւն է 700 հոգի, գլխաւորապէս Արդանուշից. սրանք ուզում են վերադառնալ Արդանուշ. 300-ի չափ էլ հայեր եկել են Պարսկաստանից։

Նուէրներ ստացվել են հայ օրիորդներից 1000 րուբլի, 1000 ր. Մոսկվայի ծառայողներից և 300 ր. ուսանողներից։

Վերջում զբաղվեց դուման սանիտարական խնամակալների ցուցակ կազմելու հարցով։

Նիստը փակվեց ժամը 11-ին։ D.

ԱԿԱԿԻ ԾԵՐԵԹԵԼԻԻ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋԸ

Երկու օր առաջ վախճանված վրաց երևելի բանաստեղծ Ակակի Ծերեթելին ծնվել է Քութայիսի նահանգի Սաչխերի գիւղում (որը բանաստեղծի հայրական կալուածքն է) 1840 թւին, յունիսի 9-ին։

Բանաստեղծը իր նախնական կրթութիւնը ստացել էր իր մօր ձեռքի տակ, որը վրաց Սօլօմոն II թագաւորի թոռն էր, իսկ յետոյ աւարտել էր Պետրօգրադի համալսարանի դասընթացը։

Ակակի Ծերեթելին վրացիների մէջ յայտնի է գլխաւորապէս իբրև լիրիկ բանաստեղծ։ Նա տուել է մի քանի հատոր բանաստեղծութիւններ և պօէմաներ. գրել է և արձակ մի քանի գրուածքներ. նա յայտնի է նաև որպէս գրամատուրգ և հրապարակախօս։

Բանաստեղծի ժողովրդականութիւնը այնքան մեծ էր վրաց հասարակութեան մէջ, որ բաւական էր արտասանել՝ Ակակի, որպէս զի ամենքը հասկանային, որ խօսքը բանաստեղծի մասին է։

Ծերեթելիի գրուածքները վայելում էին մեծ ժողովրդականութիւն, և գաւառական խուլ անկիւններում հազիւ թէ գտնվէր մի գիւղացի, որ չիմանար գոնէ մի քանի խօսք բանաստեղծի բանաստեղծութիւններից։

Նրա բանաստեղծութիւններից շատերը դարձել էին ընդհանրական, ժողովրդական, ինչպէս մեր Գամառ-Քաթիպայի «Մայր Արաքսը», Յովհ. Յովհաննիսեանի «Արազն եկաւ», Աւ. Իսահակեանի «Դարդս լացէք» և այլն։

Ծերեթելիի գրուածքներից շատերը թարգմանված են ռուսերէն, մի քանի կըտոր թարգմանութիւն կայ և հայերէն։

Բանաստեղծի մահվան լուրն ստանալով, քաղ. վարչութիւնը հեռագրով ցաւակցութիւն յայտնեց հանգուցեալի այրուն և որդուն, որ գտնվում է Սաչխերի գիւղում։ Հեռագրեր ուղարկվեցին նաև Թիֆլիսի կուլտուրական շատ հաստատութիւններից։

Հանգուցեալի կտակակատարները 4 հոգի են. դրանց թւումն է և վրաց «Թեմի» թերթի խմբագիր պ. Գր. Դիասամիձէ։

Ծերեթելիի մահվան մասին «Зак. Рѣчь» թերթը հետևեալն է գրում.

«Նա լռեց հանգաւ։

«Հայրենի ժողովրդի մտքին տիրող վրաց ազգային հանճարը անխիղճ բաղդի ձեռքով խլվեց մեզանից։

«Այժմ չը կայ. չը կան խօսքեր և արտայայտութիւններ, չը կան բաւականաչափ արցունքներ, որպէս զի մասամբ գոնէ կարող լինենք արտայայտել ամենքին պատած անասելի վիշտը, գոնէ մասամբ փարատենք ազգային տխրութիւնը, ժողովրդի հոգու թախիծը։

«Չը կայ այլև Պրօմէթէօսը, որ կէս դար շարունակ ջերմացրեց հայրենիքը Ռուսթավելիի աստուածային կրակով։ Լռեց այն տաւիղը, որի քաղցրահնչիւն լարերը վրաց քնարերգակին հասցրին դասական կատարելութեան։

«Դադարեց բաբախելուց այն սիրտը, որ այնպէս նուրբ, այնպէս զգայուն կերպով ըմբռնում էր ողջ ազգի գաղտնի մտքերը, մտածումները և ձգտումները, և դադարեց բաբախելուց այն րոպէին, երբ ողջ ժողովուրդը, որպէս մի մարդ, լցված է ներշնչված մարգարէի իղձերով, երբ դեռ մղվում է համաշխարհային պայքարը փոքր ժողովուրդների լաւագոյն իղձերի իրականացման համար։

— Ես զգում եմ, որ իմ օրերը հաշւված են,— ասաց թանկագին Ակակին վերջին անգամ Թիֆլիս գալու ժամանակ.— բայց ես կը ցանկանայի յաւիտենականութեան գիրկը չանցնել՝ ժամանակակից անցքերի գաղտնիքները չիմացած։ Կարող եմ արդեօք լինել մի Սիմէօն ծերունի, որ տեսնեմ ընդհանուր խաղաղութեան գալուստը, կապված իմ հայրենիքի Վրաստանի և մեր ընդհանուր հայրենիք՝ Մեծ Ռուսաստանի բաղդաւորութեան և բարօրութեան հետ։

«Բանաստեղծի քնարի վերջին ակկորդները հնչում էին ժողովուրդների եղբայրութեան և խաղաղութեան գաղափարի թագաւորութեան մասին, երբ չար մահը կտրեց նրա լարերը, թոյլ չը տալով վերջացնել իր նոր, բայց, աւա՛ղ, և վերջին պօէմայի վերջին տողերը…»։

Ինչպէս լսում ենք, Ծերեթելիի աճիւնը Սաչխերեթից բերվելու է Թիֆլիս և այստեղ հողին յանձնվելու։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՊԵՏՐՕԳՐԱԴՈՒՄ

I

Պետրօգրադ, 16 յունվ.

Լեհացիների օրինակը.—Երբ պատերազմի առաջին ամիսները Լեհաստանը ոտնակոխ եղաւ գերմանացիներից, և տեղական ժողովուրդը՝ հազարաւոր բազմութեամբ, ամեն ինչ թողած, փախուստ տուեց երկրի ներսերն և կամ աւերի ու կորստեան ենթարկվեց իր գտնված տեղերում, Պետրօգրադի բազմամարդ լեհական գաղութն անմիջապէս եռանդուն միջոցներ ձեռք առաւ իր հայրենակիցներին օգնելու համար։ Կազմվեցին բազմաթիւ մասնաժողովներ, որոնք անընդհատ նպաստ էին հաւաքում թէ դրամով և թէ տնական իրերով. քաղաքային վարչութեան մէջ յանձնաժողով կազմվեց նոյն նպատակով. յատուկ 3 օր նշանակվեց ամբողջ քաղաքում հանգանակութիւն անելու: Մի խօսքով՝ լեհացիք ամեն դուռ բաղխեցին և դեռ շարունակում են բաղխել իրանց կարօտեալներին ըստ կարելւոյն լայն չափով նպաստ հասցնելու համար: Ի միջի այլոց նրանք մի մեծ ընկերութիւն հիմնեցին, որ նպատակ ունէր շարունակեալ կերպով և կանոնաւոր ձեւով խնամել պատերազմի աղէտներից վնասված լեհացիներին թէ այժմ՝ պատերազմի ընթացքում, և թէ մասամբ նաև պատերազմից յետոյ: Այստեղի առաջնակարգ հայ ընտանիքները՝ ուրիշ ռուս քաղաքացիների հետ միասին՝ համակրութեամբ վերաբերվեցին լեհացիների այս ազգօգուտ ջանքերին և ամեն կերպ աջակցեցին նրանց: Այժմ, երբ պատերազմի արհաւիրքը շատ աւելի մեծ չափերով իր մահաշունչ թեւերը տարածել է այն տեղերն, ուր հայ ժողովուրդն է բնակվում և տասնեակ հազարաւոր հայեր ենթարկված են ամենադառն աղէտի, այդ միեւնոյն հայ ընտանիքները՝ հետեւելով լեհացիների կենդանի օրինակին՝ եռանդով ձեռնարկեցին համանման օգնութիւն կազմակերպել հայ աղէտեալների համար, թէև աւելի համեստ ձեւով:

Հայկական երեկոյթ. — Նրանց առաջին գործն եղաւ մի համեստ հայկական երեկոյթ-ներկայացում սարքել, որ տեղի ունեցաւ յունվարի 12-ին արքունի Միքայէլեան Թատրոնում: Կայսերական օպէրային խմբի երգիչներն և երգչուհիները ներկայացրին «Գէյշա» օպէրետկան «ի նպաստ հայ փախստականների»: Երեկոյթն անձամբ պատուել էին իրանց ներկայութեամբ պատերազմական մինիստր գեն. Սուխոմլինով և արտաքին գործերի մինիստր պ. Սազոնով: Անգլիական և ֆրանսիական դեսպաններն ուղարկել էին յատուկ ներկայացուցիչներ: Թատրոնն ամբողջապէս լիքն էր ամեն ազգի հասարակութեամբ, որ չէր խնայել իր լուման մատուցանել առաջադրված նպատակի համար: Ներկայացումն աջող անցաւ թէ խաղի և թէ նիւթական արդիւնքի տեսակէտով: Զուտ հասոյթ մնաց մօտ 5000 րուբլի:

Նոր ընկերութիւն.—Շատ աւելի կարեոր է երկրորդ ձեռնարկութիւնը: Վերև յիշված լեհական ընկերութեան կանօնադրութիւնն իբրև հիմն ընդունվելով կազմվեց այստեղ մի նոր ընկերութիւն, որ այս յունվարի 5-ին արդէն հաստատված է պաշտօնաւոր իշխանութիւնից: Ընկերութիւնը կոչվում է «Պատերազմին մասնակցող հայերի չքաւոր ընտանիքներին եւ պատերազմից վնասված աղքատ հայ ազգաբնակութեան նպաստամատոյց ընկերութիւն» (Общество вспомоществованія бѣднымъ семействамъ армянъ, участвующихъ въ войнѣ, и бѣдствующему армянскому населенію, пострадавшему отъ военныхъ дѣйствій): Յունվարի 14-ի երեկոյեան, տեղիս հայոց ակումբում կայացաւ այս նորակազմ ընկերութեան առաջին ընդհանուր ժողովը: Պ. Հ. Գեանջունցեան (որի ամուսինը գլխաւոր նախաձեռնողն էր հանդիսացել) ժողովը բացեց, հարկ եղած բացատրութիւններով, և ապա ինքն եւս նախագահ ընտրվելով շատ լաւ ղեկավարեց մինչև վերջը: Նախ կարդացվեց կանօնադրութիւնն, որ կարճ է, բաղկացած է ընդամենը 20 յօդուածից, բայց շատ առաւելութիւններ է բովանդակում: Անդամ կարող են գրվել ամենքը, երկու սեռից, առանց ազգի և կրօնի խտրութեան: Կենտրօնը գտնվում է Պետրօգրադում, իսկ գործունէութեան վայրն է ընդհանուր Ռուսաստանը: Ամեն տեղ, լայնածաւալ Ռուսաստանում, ուր «ընկերութեան անդամներից 10 հոգի բնակութիւն ունեն, կարող են ընկերութեան տեղական ճիւղ բանալ»: Տարեկան անդամավճարը 6 րուբլի է, միանգամից կամ ամսական 50 կոպէկ մասնավճարով:

Տեղիս փոքրաթիւ հայ հասարակութիւնն, անմիջապէս, առաջին ժողովում, 52 անդամ տուաւ այս ընկերութեան:

Ընդհանուր ժողովը իր վարչական մարմնի ընտրութեան ձեռնարկելով գաղտնի քուէարկութեամբ կենտրօնական խորհրդի անդամներ ընտրեց հետեւեալ անձերին. Պարոն և տիկին Պ. Օ. Ղուկասեան, պ. և տ. Հ. Գ. Գեանջունցեան, պ. և տ. Գր. Տիգրանեան, պ. և տ. Վ. Վարդանեան, պ. և տ. Գր. Բոզդանեան, տ. Ե. Գ. Ասրիբէգեան, պ. Յակոբ Ղուկասեան, պ. Մ. Ռոստոմեան և տողերիս գրողը, ընդամենը 14 հոգի: Ըստ կանօնադրութեան այդ թիւը կարելի է բարձրացնել մինչև 27-ի:

Վերստուգիչ յանձնաժողովի անդամներ ընտրվեցին՝ պ. պ. Պ. Սուլթանշահ, Պ. Բոզդանեան և Յ. Ներսիսեան:

Նորընտիր վարչութիւնն այն երեկոյ իսկ ընդհանուր ժողովից յետոյ հաւաքվելով իր դիւանը կազմեց հետեւեալ կերպով՝ Պ. Օ. Ղուկասեան՝ նախագահ, պ. պ. Հ. Գեանջունցեան և Գր. Բոզդանեան՝ փոխ-նախագահներ, պ. պ. Ա. Սարուխան և Մ. Ռոստոմեան՝ քարտուղարներ, և տ. Ե. Ասրիբէգեան և պ. Յակ. Ղուկասեան գանձապահներ:

Ընկերութեան առաջին մուտքն եղաւ յունվարի 12-ի ներկայացումից գոյացած մօտ 5,000 (հինգ հազար) րուբլի գումարը: Յոյս կայ թէ այս ընկերութիւնը հետզհետէ տեղական ճիւղեր բանալով Ռուսաստանի զանազան հայաբնակ քաղաքներում՝ մի ընդհանուր կապ կը հաստատէ պատերազմի աղէտին ենթարկված բոլոր չքաւոր հայ անհատների ընտանիքների օգնութեան գործում:

Սարուխան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Վաղը, «Գթութեան և ողորմածութեան» օրը բանկերում և այլ հասարակական հիմնարկութիւններում ժողովարարութիւն անելու են տ. տ. Հ. Աւթանդիլեան և Լ. Իսատամեան:

◆ Թիֆլիսի դպրոցների ծնողական միութիւնների կենտրոնական խորհրդի յունվարի 27-ին լուսաւորութեան մինիստր կոմս Իգնատիեվին ուղղած հեռագրին ի պատասխան ստացվել է հետեւեալը. «Թիֆլիս. Ծնողական միութիւնների կենտրօնական խորհրդի նախագահ Զուրաբեանին: Անկեղծ շնորհակալ եմ կենտրօնական խորհրդից և անձամբ ձեզնից իմ՝ մինիստրութեան կառավարիչ նշանակվելու ողջոյնների համար: Իգնատիեվ»:

◆ Ներկայումս Թիֆլիսում է գտնվում Պետական Դումայի անդամ Խոջամովը:

◆ Կարսում և նրա շրջակայքում տեղի ունեցած անցքերի պատճառով, որի ժամանակ յարձակումներ են տեղի ունեցել ռուսահպատակ անզէն թուրքերի վրա, Թիֆլիս է եկել թուրքերի մի պատգամաւորութիւն, որի կազմի մէջ են մտնում Ա. Մ.-բ. Թոփչիբաշեվ, Ա. Գ. Թաղիեվ, և Ք. Ա.-բ. Գուլիեվ (Բագուից), Ֆ.-խ. Խոյսկի, Ա.-բ. Ռաֆիբէկով և Գ. Միր-Հազմաեվ (Գանձակից), Ր.-խ. Նախիջեանսկի (Երեանի նահ.), Ա.-բ. Մանմուդբէկով (Թիֆլիսից) և Մեհէդ-Միրզա Լիւթֆալի (Կարսից): Պատգամաւորութիւնը ներկայացաւ Փոխարքայի օգնական Միշլաեվսկուն, որը պատասխանել է թուրքերի ներկայացուցիչներին, որ Կարսի և նրա շրջանում խաղաղ թուրքերի վրա յարձակում գործելու մէջ յանցաւորները զինաթափ կանվեն և պատիժ կը կրեն զինուորական ժամանակի օրէնքի համաձայն: Ի միջի այլոց՝ բաւարարութիւն է տրված յիշեալ անցքերից վնասված թուրքերի համար օգնութիւն կազմակերպելու միջնորդութեան: Թոյլատրված է կազմակերպել մի կոմիտէտ, որը հաւաքելու է նուիրաբերութիւններ յօգուտ Կարսի և ընդհանրապէս փախստականների:

◆ Կիրակի, յունվարի 25-ին, Թիֆլիսի շրջանի զօրքերի կոմենդանտ Վօլսկիի կարգադրութեամբ հրաւիրված էր մի նիստ քաղաքի ուտեստի մթերքների դրութեան մասին խորհրդակցելու: Նիստը տեղի ունեցաւ քաղաքագլուխ Ալ. Խատիսեանի նախագահութեամբ, որին մասնակցում էին Անդրկովկասի երկաթուղիների կառավարիչ Զվենիգորոդսկի, Թիֆլիսի շրջանի զօրքերի ինտենդանտ գեն. Բեռկեր, զինուորական հաղորդակցութեան վարչութեան ներկայացուցիչ ինժ. Եփրեմով, ոստիկանապետ Զղանովսկի, քաղ. վարչութեան անդամ Ջաքար, բորսային կոմիտէտի նախագահ Ա. Ն. Միլեան, վաճառականութեան աւագի օգնական Ա. Ա. Էնֆիաճեան, դումայի տնտեսական յանձնաժողովի նախագահ Տէրտէրեան և առեւտրա-տնտեսական վերատեսուչ Շահվերդեան: Մշակվեց հրահանգի ծրագիր, որը որոշում է ֆունկցիաներն այն առանձին միջվարչական յանձնաժողովի, որ կազմվել է քաղաքի ազգաբնակութեանը ուտեստի մթերքներ մատակարարելու համար: Հրահանգի համաձայն, յանձնաժողովին նախագահելու է քաղաքագլուխը, մշտական անդամներ լինելու են բոլոր վարչութիւնների ներկայացուցիչները, որ ներկայ էին խորհրդակցութեան: Յանձնաժողովի նիստերը նշանակելու է քաղաքագլուխը, երբ կարիք լինի: Յանձնաժողովը որոշելու է քաղաքին հարկաւոր մթերքի պաշարի քանակը և ըստ այնմ կազմակերպելու է ապրանքներ ստանալու գործը: Հրահանգի նախագիծը ներկայացվել է գեն.-լէյտ. Վօլսկին հաստատելու համար:

◆ Կիրակի օրը Կարս, Սարիղամիշ և Ջուլֆա ուղարկվեց մի վագոն տաք իրեր և ընծաներ, որ հաւաքվել են Պետրօգրադում, Ռոստովում և Թիֆլիսում՝ զօրքին բաժանելու:

◆ Վլադիկավկազի երկաթուղու վարչութիւնը յայտնել է Անդրկովկասի կայարաններին, որ Դոն գետի կամուրջի մօտ սառցակոյտ է նկատվել: Այդ պատճառով ճանապարհորդները պէտք է անցնեն կամուրջը և նստեն միւս գնացքի վրա: Թէև միջոցներ են ձեռք առնված սառցակոյտը ոչնչացնելու, բայց և այնպէս մինչև գնացքների կանօնաւոր երթեւեկութիւնը վերականգնելը 3—4 օր կը տեւի:

◆ Խարփութի ակումբի անդամների ժողովը ընտրել է 46 անդամ:

◆ Այսօր Թիֆլիսի Ժողովարանում մի խումբ հայ դերասաններ և սիրողներ ներկայացնում են Ա. Ցագարելիի «Խանում» յայտնի ուրախ կոմէդիան: Խանումի դերը կատարելու է դերասանուհի տ. Վարդուհին:

◆ Թիֆլիսի Հրէական Բարեգործ. Ընկ. թոյլատրված է հանգանակութիւն անել Թիֆլիսի ազգաբնակութեան մէջ Ընկ. միջոցները աւելացնելու պատերազմից վնասվածներին օգնելու համար:

◆ Իշխանուհի Սոֆիա Արղութեան-Երկայնաբազուկ մեզ խնդրում է տպել հետեւեալը. «Փախստականների երեխաների ցերեկվայ ապաստարանի կանանց միութիւնը իր անկեղծ շնորհակալութիւնն է յայտնում Նպաստամատոյց Ընկ.՝ ամսական 45 ր. նպաստ տալու համար»: Նոյնանման շնորհակալութիւն յայտնում է իշխանուհին և Բաղ. կենտրոնական կոմիտէտին ամսական 45 ր. նպաստ տալու համար:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Հայկական ներկայացում

Մեզ թւում է, որ տ. Մայսուրեանը անաջող պիէս էր ընտրել իր բենեֆիսի համար. Նա կարող էր ընտրել աւելի հետաքրքրական, աւելի ժամանակակից պիէս, քան Օստրովսկիի «Փոթորիկն» էր, որի մէջ յարգելի տիկինը, որ կատարում էր Կատերինէի դերը, չը կարողացաւ հանդէս բերել իր կարողութեան բոլոր կողմերը, իր համակրելի շնորհքի ողջ թափը:

«Փոթորիկը» պիէսը 50—60 թւականների ռուսական կեանքից վերցրած մի պատկեր է ներկայացնում, որտեղ ցուցահանվում են ռուսների ընտանիքներում տիրող կաշկանդող աւանդապահութիւնը յանձին այրի Մարֆա Կաբանովայի (տ. Ցամիկ): Նկարագրվում են սովորական սիրահարութիւններ, հանդիպումներ, որոնց մէջ աչքի ընկնող առանձին ապրումներ չը կան: Բեմը ծանրաբեռնում են աւելորդ մարդիկ, որ պիէսի հետ կապ չունեն, միջանկեալ դուրս է բերված Սավելօ Դիկօյ անունով մի վաճառական, որ դարձեալ պիէսի հետ կապ չունի: Ինչպէս, ժամանակակից հասկացողութեամբ, պիէսում դրամա չը կայ, կան միայն տեսարաններ և պատկերներ: «Փոթորիկը» գուցէ որոշ հետաքրքրութիւն ներկայացնէր իր ժամանակին, բայց այժմ նման պիէսները հնացած պէտք է համարվեն: «Փոթորիկը» տակաւին գուցէ մի բան ասի գաւառացի ռուսի սրտին. սակայն նա մեզ, հայերիս համար՝ անհարազատ է, և մասամբ դրա համար է, որ անաջող ենք համարում նրա ընտրութիւնը:

Եւ որովհետև, ինչպէս ասացինք, պիէսը հարազատ չէ մեզ, նա, բնականաբար, հարազատ չէր կարող լինել և հայ դերասանների համար: Եւ պատճառն այդ էր, որ խաղի մէջ չէր նկատվում ռուսական ոգի, բացառութեամբ պ. Մամիկոնեանի և տիկ. Սեւումեանի խաղի: Սրանց խաղը փոքր ինչ բնական էր, երբ ռուսական երգ երգելով պարում էին լուսնեակ գիշերին: Ռուսական բնորոշ գծեր ունէին մասամբ և պ. Սեւումեան (Դիկոյ վաճառական) ու պ. Միրզոյեան (ինքնուս ժամագործ): Միւս դերակատարներից պ. պ. Ալիխանեան և Բերոյեան կարծես իրանց նեղ էին զգում իրանց դերերի մէջ, որովհետեւ պիէսը նրանց աւելին հնարաւորութիւն չէր տալիս: Իսկ տիկ. Ցամիկ այնքան էլ ցայտուն չը տուեց աւանդամոլ, շատախօս և յամառ պառաւի տիպը:

Տիկ. Մայսուրեան անթիւ անգամ բեմ կանչվեց և մի քանի կողովներով ծաղիկ ստացաւ ընծայ: Ս.

—

Օպէրա

Երկուշաբթի, յունվ. 26-ին Արքունական թատրոնում տեղի ունեցաւ փորձված դիրիժեօր Տրուֆֆիի բենեֆիսը:

Ներկայացվեց «Ջիոկոնդա» պիէսը, որ իր սիւժէով ու ախորժալուր երաժշտութեամբ լաւագոյն պիէսների շարքում դասվեց:

Բենեֆիցիանտը առիթ ունէր ցոյց տալ իր դիրիժեօրական ընդունակութիւնները, և նա, յիրաւի, օրկէստրը վարեց այդ օրը իրան յատուկ շնորհքով ու աջող:

Հասարակութիւնը, որ դժբաղդաբար չէր լցրել թատրոնը՝ նիւթապէս լիովին վարձատրելու երկարամեայ բարեխիղճ դիրիժեօր Տրուֆֆիին, իր բարոյական գոհունակութիւնը արտայայտեց ջերմ ծափահարութեամբ: Երրորդ գործողութեան մէջ բենեֆիցիանտը բեմ կանչվեց և դարձաւ օվացիայի առարկայ մանաւանդ ամբողջ խմբի կողմից: Իսկ օրկէստրը մատուցեց մի մեծ դափնեայ պսակ: Եղան նաև մի քանի ընծայաբերութիւններ:

Ներկայացումն անցաւ պանծօն և տպաւորիչ էր շնորհիւ գեղեցիկ անսամբլի՝ Իվօնի (Ջիօկօնդա), Եւգենիէվայի (Լաուրա), Կովէլկովայի (կոյր), Զալէվսկիի (Բարնաբա), Ռոզինակի (Գրիմալդօ) և Բրիւնէլլի (Բակօեօ):

Ճաշակաւոր էր բեմադրութիւնը:

Աջող կատարվեց «Ժամերգի պարը» Բաւլէրզակի մասնակցութեամբ:

Րեցենզենտ

—

Երգիչ Բակլանովի գաստրոլները գրաւում են այնքան մեծ բազմութիւն Արքունական թատրոնը, որ ոչ մի բազկաթոռ դատարկ չէ մնում, և շատերը չեն կարողանում տոմսակ ճարել: Նոյնն էր և կիրակի, յունվարի 25-ին, երբ նա ներկայացրեց և երգեց Մեֆիստոֆելի պարտիան «Ֆաուստ» օպերայի մէջ: Պատճառը գուցէ և այն է մասամբ, որ Բակլանով իր դերերը ներկայացնում է ոչ շաբլօնային ձեւով, այսպէս, օրինակ, մենք մինչև հիմա սովոր էինք տեսնել Մեֆիստոֆելին իբրև մի սատանայ, բոցեղէն կարմիր հագուստ ունի և որից պէտք է զարհուրեն երեխաները. ոչ, Բակլանովը հանդիսանում է մեր առաջ ոտքից մինչև գլուխ գորշ զգեստ հագած դև, բայց խորամանկ, փայփայող, քծնող դև, աւելի իբրև մի ոգի, տեսիլ՝ և աշխատում է գրաւել մարդուն ոչ թէ երկիւղով, սարսափով, այլ փաղաքշանքով, խորամանկութեամբ, նենգութեամբ:

Մեֆիստոֆելին կամ չար ոգուն, այդպիսի կերպարանքով երեւան հանելը Թիֆլիսի բեմի վրա առաջին անգամն է տեսնվում, ուստի և կարծիքները տարբեր եղան. ոմանք գտնում էին, որ այդ տեսակ տիպաւորումը ճիշդ չէ, բայց յամենայն դէպս օրգինալ է:

Բակլանովը առանձին ոգեւորութեամբ երգեց «На землѣ весь родъ людской» մասը և թատրոնը, որ մինչ այդ սառն էր վերաբերվում, նոյնպէս ոգեւորվեց և դղրդաց բուռն ծափահարութեամբ: Հ. Ա.

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

◆ Այսօր, յունվարի 28-ին Արքունական թատրոնում նշանակված է յայտնի բարիտոն Բակլանովի բենեֆիսը, որի առիթով կը տրվի գեղեցիկ «Տաիս» օպէրան: Ներկայացման բոլոր տոմսակները ծախված են:

◆ Փետրվ. 9-ից Արքունական թատրոնում օպէրէտային ներկայացումներ տալու Ամիրագօյի խումբը, որի անունը անծանօթ չէ Թիֆլիսի երաժշտասէր հասարակութեան: Ռեպէրտուարի մէջ կան նոր օպերէտաներ:

◆ Վաղը նշանակված է ներկայ օպէրային խմբի մի համակրելի ու ջանասէր անդամի՝ տ. Նեստերէնկոյի բենեֆիսը: Կը ներկայացվի աջող պիէս «M-me Բատերֆլէյ»: Առհասարակ տանջվող կնոջ դերերը առանձնապէս աջողվում են Նեստերէնկոյին:

◆ Տիկ. Կովէլկովայի բենեֆիսը «Կարմէն» և Բակլանովի 4-րդ գաստրոլը, «Եւգենի Օնէգին»—անցան մեծ աջողութեամբ: Տիկին Կովէլկովան ստացաւ շատ ընծաներ, իսկ Բակլանովը դարձաւ օվացիայի առարկայ:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 26 յունվարի

Թիֆլիսի հայոց առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոս մի տարօրինակ կարգադրութիւն է արել՝ այս շաբթիս բոլոր օրերում, բացի հինգշաբթիից, շարունակել պարապմունքները Թիֆլիսի հայոց ծխական դպրոցներում:

Այդ կարգադրութեանը որպէս հիմք ծառայում է՝ ա) որ այս տարում տօներ շատ են եղել, բ) որ ծրագիրը կը մնայ անկատար:

Տարօրինակ տրամաբանութիւն. Նախ մինչև օրս չի եղել և ոչ մի հատ տօն, որը իր յարգելի պատճառը չունենար. ամեն մի տօն եղել է տրամաբանական և պատճառաբանված: Գալով երկրորդ պատճառին՝ ծրագրին, մեր դպրոցների ծրագիրը այնքան ընդարձակ է, որ եթէ Բարեկենդանի շաբթի վրա հինգ շաբաթ էլ գնես, էլի դասընթացքը չես սպառի:

Ուրեմն ինչի համար է այդ կարգադրութիւնը: Եթէ Մեսրոպ սրբազանը կարծում է, որ չորս-հինգ օր աւելորդ պարապելով ցաւին դարման կը լինի, նա չարաչար սխալվում է, քանի որ աշակերտների ընդհանուր դժգոհութեան և ուսուցիչ-ուսուցչուհիների փչացած տրամադրութեան պայմաններում պարապելը մի այնպիսի արհեստական մթնոլորտ է ստեղծում, որի արդիւնքներից հազիւ թէ գոհ մնան սրբազանն ու թեմական տեսուչը:

Գալով պետական դպրոցներին, այնտեղ ամեն ինչ գնում է նորմալ, միայն մեզանում է որ արհեստական միջոցներով կարծում են թէ ուսում ու գիտութիւն են տարածում:

Քանի դեռ ժամանակ կայ, պէտք է փոխել այդ կարգադրութիւնը: Մի ուսուցիչ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

—

Արտաշէս Սարեանին.—Մտէք խմբագրատուն. Ձեր հասցէին նամակ կայ:

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Գուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն:
Բ. Գ. ԱՂԱՄԱՐԵԱՆ—$9^{1}/_{2}$—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծախկահատ.:
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի քթի հիւանդութ.:
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երկշ. հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.:
ԿԻՆ-Բ.-ԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.:

ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—153

Ատամնաբուժարան
հիմնված ատամնաբոյժ
Բ. ՀԱՅԿԻՆԱՅԻ
Նախաձեռնութեամբ: Թիֆլիս, Միխայլովսկի պր. № 7
Բուժարանը բաց է հիւանդների համար օրվայ ու գիշերվայ ամեն ժամին: Ատամները բուժելու և պլոմբելու համար վճարը ստացվում է ըստ հաստատված սակագնի:
Բուժարանում գործում են 5 բժիշկ-մասնագէտներ, բժ. վիրաբոյժ Ր. Բ. Պիրադովը (որ ժամանակաւորապէս բացակայ է):
Բուժարանն ունի կատարելագործված լաբօրատօրիա արհեստական ատամներ պատրաստելու համար: Կատարվում են ամեն տեսակ ատամնա-տեխնիկական աշխատանքներ և շտապ վերանորոգումներ 3 ժամվայ ընթացքում:
(օ. մ.) 755. 100—73

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի: Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սիմեօնովսկայա փող., № 18 (Վօրօնցովի արձանի մօտ): Բժշկի բնակարանը Սիմեօնովսկայա, № 16.
(չ. ու. կ.) 1018. 100—26

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
ՆՈՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԱՐԱՆ
ԱՐՇԱԼՈՅՍԻ ՁԱՅՆԵՐ
Ժողովածու հայրենասիրական երգերի
(Խմբապետների և խմբերի պատկերներով)
ԳԻՆՆ Է 40 ԿՈՊ.
Դիմել Թիֆլիսի գրավաճառանոցներին: Պահեստը գտնվում է Эрев. площадь, магазинъ Арзуманяца. (օ.մ.) 32. 5—5

„Մշակի" խմբագրատան
վաճառվում են
հետեւեալ վիպական երկերը.
1) ՋՀՈՒԴ ԲՈՒՇԱՆ՝ վէպ Պարսկաստանի կեանքից, Շահրիարի . 1 ր. —
2) ԻՆՆՍՈՒՆ ԵՐԵՔԸ, մեծ վէպ Վ. Հիւգօյի, թարգմ. Ա. Սաֆարեանի . . . . 1 ր. 50
3) ՈՒՐԱՆԻԱ, աստղագիտ. վէպ. Կ. Ֆլամարիօնի, թարգմ. Հ. Առաքելեանի . . . . 1 ր. 50
4) ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հանրի Բորդօյի, թարգ. Հ. Առաքելեանի— 60
5) ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔ, Շահրիարի . . . . — 50
6) ՀԱՅՐԵՆԱԶՈՒՐԿ, Ե. Սվրիի, թարգ. Իս. Յարութիւնեանի . — 50
7) ՔՍԱՆ ՎԷՊԻԿՆԵՐ, Գի դը Մոպասանի, թարգ. Հ. Առաքելեանի 1 ր. —
8) ՍԱՌԱՌՆՈՂ ՈԳԻՆ վէպ. Յ. Սոլովեանի . . . . — 40
Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ վճարելով, կը ստանան 25% զեղչ ճանապարհածախսը մեզ վրա: Վերադի վճարով պահանջողներին կը լինի միմիա 15%:
Հասցէն՝ Ред. газ. «Мшакъ», Тифлисъ.
(5) 0—12

Առեւտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՍԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայլեան պր. 22. Տելեֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առեւտրական կրթութիւն:
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ:
Գործնական զբաղմունքները կատարվում են կուրսերում՝ Լոնդոնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձեւով կազմակերպված Muster-Comptoir-ում: Նիւթերն առնվում են իրական կեանքից: Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առեւտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առեւտրական իրաւունք, մուրհակի կանօնադրութիւն). 5) Առեւտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն (ամենայն ձեռքի ուղղումն), արագագրութիւն. բ.) ոչ-պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) Սղագրութիւն. 3) Դակտիլօգրաֆիա (Ռեմինգտօն և այլ.) և 4) Առեւտր. թղթակցութիւն օտար լեզուներով: Զբաղմունքները կատարվում են և զատ-զատ: Ունկնդիրների թւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար: Ունկնդիրների թիւը սահմանափակված է: Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ին: Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 11—12-ը և երեկ. 4—6-ը: Ծրագիրը և կանօնները ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում: Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշւապահներ, օգնականներ և առեւտ. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից: (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 334 ունկնդիր, որոնցից 67 հոգի իգական սեռից):
Կուրսերի հիմնադիր՝ Տ. ՓԻԼՕՍԵԱՆ
(ա.օ.) 1046. 0—30

Типографія Канцелярiи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.